

ՈՍՏԱՆԻԿԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆԻՆ

Բանաստեղծ Ոստանիկին (Ոստանիկ Յովհաննիսեան, 1896-1954) նուիրուած յետմահու կարճատու քաժնի մը որպէս ներածութիւն, իրանահայ գրականութեան յառաջապահ հոսանքը ներկայացնող *Նոր էջ* պարբերագիրքը գրած էր 1950ական թուականներուն. «Հանգուցեալ Ոստանիկը մէկն է հայ քանաչուած բայց դժբախտաբար ըստ արժանոյն չգնահատուած բանաստեղծներէից: Նա ծագումով տանկահայ բայց իր կեանքի վերջին եւ լուազոյն տարիները ապրել է պարսկահայութեան մէջ այնպէս որ իրապէս նրան պիտի պարսկահայ բանաստեղծ քանաչել»¹: 1927-1950ի միջեւ գրուած այս մամակները, զորս Ոստանիկ ուղղած է Կոստան Զարեանին, մաս կը կազմեն վերջինիս «Իրանահայ» շփումներու ցանցին:

Ըստ երեւոյթին, երկու գրողները ծանօթութիւն հաստատած էին 1924-1925ին՝ Զարեանի Փարիզ կեցութեան շրջանին: Այնուհետեւ, Զարեանի վեներտիկ փոխադրումով, հնարաւոր է, որ հանդիպած ըլլան անոր Փարիզ այցելութիւններուն ընթացքին: 1946ին, երբ մամակագրութիւնը վերսկսած է, Զարեան Միացեալ Նահանգներ կ'ապրէր՝ Նիւ Եորք մահանգին մէջ: 1947ին վերադարձած է Եւրոպայ, հաստատուելով իտալական Իսկիա կղզին մինչեւ 1951:

Ոստանիկն ալ անհանգիստ ու թափառական կեանք մը ունեցած է: Ծագումով վանեցի ու հօրմէ որր՝ 1896ի ինքնապաշտպանութեան կռիւներուն պատճառով, ուսումը ստացած էր ծննդավայրի տարբեր դպրոցներու մէջ: 1913ին անցած էր Կովկաս, ուր նոյն տարին հրատարակած էր իր առաջին գործը՝ *Հեկեկանքներ*: Կիսատ ձգած էր ուսումը Գեորգեան քննարանին մէջ, կամաւորական շարժումին զինուորագրուելով, ու այնուհետեւ անցած էր Թիֆլիս: Հայաստանի Հանրապետութեան շրջանին լրագրական ու խմբագրական պաշտօններ վարած էր *Աշխատանք* եւ *Զինուոր* թերթերուն մէջ, իսկ Կարսի անկումէն ետք՝ կրկին մարտի դաշտ նետուած: Հայ-թրքական

1 ՈՍՏԱՆԻԿ (ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Ռ.), ի *Նոր էջ*, 10 (1958), 82:

պատերազմի աւարտին որքանոցի հսկիչ եւ ուսուցիչ եղած էր, իսկ Ապրիլ 1921ին՝ Փետրուարեան ապստամբութեան ճախողութենէն ետք, անցած էր Թաւրիզ (հոն նոյն տարին լոյս ընծայած է երկրորդ գիրքը՝ *Զիռլֆի երգեր*) ու ապա՝ Փարիզ, ուր հիմնականին ապրած է մինչեւ 1934 (շրջան մը նաեւ Պրիւսէլ բնակած է եւ, ըստ երեւոյթին, Իտալիա): Այդ միջոցին անդամ եղած է նշանաւոր «Մենմ» խմբակցութեան եւ հրատարակած է երրորդ հատորը՝ *Արեւելէն Արեւմուտք* (Փարիզ, 1932): Այնուհետեւ անցած է Իրան, ուր ապրած է մինչեւ մահ: Հոն զբաղած է ուսուցչութեամբ եւ երեք գիրքեր եւս հրատարակած: Յետմահու լոյս տեսած են *Ոստանիկ. ինքնակենսագրութիւն եւ 10 հերթուած* (Թեհրան, 1960) խորագրով պրակ մը եւ *Երկեր* խորագրուած հատոր մը՝ Իրանահայ Գրողների Միութեան հրատարակութեամբ (Թեհրան, 1972):

Հաւանական է, որ երկու գրողներուն յարաբերութեան, ինչպէս Ոստանիկը ակնարկած է, աւելի մանրամասն լուսաբանութիւն մը գտնուի իր յուշերուն մէջ, որոնք անտիպ մնացած են: Իրանահայ գրագէտին արխիւին ճակատագիրը յայտնի չէ: Այս տասնհինգ մամակները, որոնց բնագիրները կը գտնուին Երեւանի Եղիշէ Զարեանցի անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանին մէջ (Կոստան Զարեանի ֆոնո, քիւ 81), բաւական հետաքրքրական մանրամասնութիւններ կու տան թէ՛ իրանահայ գրագէտին եւ թէ՛, յետադարձ կարգով, Զարեանի կենսագրութեան ու գործունէութեան, ինչպէս եւ ընտանիքին մասին: Զանոնք կը հրատարակենք նոյնութեամբ, պահելով Ոստանիկի լեզուական իւրայատկութիւնը (արեւմտահայերէնի ու արեւելահայերէնի խառնուրդը՝ վանեցի ծագումին պատճառով) եւ «պարսկահայ» (իմա՝ արեւելահայերէնի մախախորհրդային) ուղղագրութիւնը: Կատարած ենք կէտադրական ու բնագրային կարգ մը անհրաժեշտ լրացումներ, որոնք նշուած են սուրանկիւն փակագիծերով: Աշխատած ենք նաեւ նամակներուն լրացուցիչ բացատրութիւններ տալ ծանօթագրութիւններու մէջ, որքանով որ մեր պայմանները կը թոյլատրեն: Շնորհակալութիւն կը յայտնենք բանասիրական գիտութիւններու բեկնածու Արծուի Բախչինեանին (Երեւան) եւ «Ալիք» օրաթերթի խմբագրական կազմի անդամ Արա Յ. Աւանեսեանին (Թեհրան)՝ որոշ տուեալներու ձեռքբերման իրենց ցուցաբերած օժանդակութեան համար:

Ա.

18 3 27

Բրիւֆսէլ

Սիրելի Զարեան

Կսպասէի քարթիդ արդէն: Շնորհակալ եմ ի սրտէ: Այո՛, իմ էլ մտահոգութիւնը գործ գտնելն է եւ հաւանաբար շատ լաւ գործ «խաղաղ ու անաղմուկ մի կեանքով այդքա՛ն տառապանքներէ» յետոյ, շանսեր կան, պէտք է դիմանալ միայն եւ, ատամներս սեղմած, բերանս փակ, ձգած եմ որ ուրիշներ հետաքրքրուեն իմ կեանքով: Կարճ. ինձ կ[ը] սպասւի համեստ դիրք մը, որին չեմ ձգտած եւ ինչպէս վերեւ ասացի քու բառերով «անաղմուկ» մի կեանք, եթէ շուրջս փարիզեան, Թաւրիզեան² խլէզները չչարժուին: Գոնէ մի փոքր ժամանակ, մինչեւ որ ես երեւամ այնպէս ինչպէս ինքս կամ, կամ յաւակնել եմ միշտ կարծել ինքզինքս եւ ոչ թէ այնպէս ինչպէս ինձ մղել են լինել պայմանները, միջավայրը, եւ ընկերներ...

Ահա՛, ինչպէս տեսնում ես մի լաւ հեռանկար, թերեւս մօտիկ, բայց դրա կպած ենք:

Ինչ վերաբերում է դրամին, ի՛նչ արած. ձեռքիդ չկա՛[յ], ոչ ի՛նչ, ի հարկէ մեծ, շատ մեծ օգնութիւն արած կլինես ինձ, եթէ այդ գրպանովդ իսկ, եթէ ունեցար մինչեւ դասախօսութիւն մի բան հասցնես, որ կը վերադարձնեմ անմիջապէս, սակայն գրաւածներդ ինձ չափազանց պէտք են[՝] մանաւանդ վերջին տարիներու արտադրութիւնները: Զանա, շատ եմ խնդրում, գոնէ «Մալարիան»³, «Փարիզը»⁴ եւ եթէ կարելի է մի կարճ հատուած էլ «Հայաստան»⁵ պօժմից արտագրել, կամ խնդրել տիկնոջ⁶ որ

2 Ոստանիկ Թաւրիզ ապրած է 1921-1922ին:

3 ԶԱՐԵԱՆ, Կ., Մալարիայ, ի Հայրենիք, Փետրուար 1926:

4 ԶԱՐԵԱՆ, Կ., Փարիզ, ի Հայրենիք, Մայիս 1926:

5 ԶԱՐԵԱՆ, Կ., Հայաստանում, ի Հայրենիք, Նոյեմբեր 1925:

6 Կ'ակնարկէ Կ. Զարեանի առաջին կնոջ՝ դաշնակահարուհի Թագուհի Շահնագարեանին (1891-1962):

արտագրի, եւ ղրկիր ինձ. դրանք կարճ բաներ են, դժւար չի լինի քեզ համար:

Այստեղ եթէ կարելի լինէր «Հայրենիք»⁷ ձեռք բերել քեզնից չէի ուզի: «Օրերի պսակ»⁸ կա[յ] մօտս. ի դէպ 26-ի գիշերւայ համար նրանից մէկ կտոր պիտի արտասանի Տիգրան Պօղպատը⁹, մի երիտասարդ տղա[յ], որին յանձնարարեցի անցեալ օր. այդ գիշեր մի չքեղ երեկոյթ է, թէեւ կուզէին յետաձգել իմ պատճառով. սակայն, ե՛ս գերադասեցի յետաձգած լինել, ժամանակ չահած լինելու համար որպէսզի անպատճառ յիշածս կտորները ունենամ. ուրեմն իմս 3-ին է. մինչ այդ, հաւատացած եմ որ կը հասցնես:

Շատ ուրախ եմ որ հատոր պատրաստելու վրայ ես¹⁰, գիտցիր որ քո յաջողութիւնները իմ էլ յաջողութիւնս եմ համարում: Թէքէեան¹¹ եւս Փարիզում տպագրութեան է յանձնել իր նոր աշխատութիւնները, եթէ արդէն լոյս չէ տեսեր¹²:

Բարեւներ տիկնոջ[.] Նուարդիկին¹³ եւ տղաներուդ¹⁴, որոնց տեսնելու առիթ պիտի ունենամ մօտ ատեն:

Քո

ՈՍՏԱՆԻԿ

Հասցէդ փոխել ես?

7 Հայրենիք (1922-1970)՝ ամերիկահայ գրական-ֆաղափական ամսագիր, ապա՝ եռամսեայ:

8 ԶԱՐԵԱՆ, Կ., Օրերի պսակ, տպ. Տէր-Սահակեան, Պոլիս 1922:

9 Տիգրան Պողպատեան՝ դերասան:

10 Կարելի չեղաւ պարզել, թէ Զարեան ի՞նչ հատորի մախապատրաստութիւնը կը կատարէր այդ շրջանին:

11 Վահան Թէֆէեան (1878-1945)՝ արեւմտահայ բանաստեղծ:

12 1920ական թուականներում Թէֆէեան որեւէ հատոր հրատարակած չէ:

13 Նուարդ Զարեան (1917-2005)՝ Զարեանի դուստրը, ֆանդակագործուի:

14 Վահէ Զարեան (1913-1985)՝ արուեստաբան, եւ Արմէն Զարեան (1914-1994)՝ ճարտարապետ:

Բ.

7 Յունիս 1928

Փարիզ

Սիրելի Զարեան

Այնքան ուշացաւ նամակս, որ հաւանաբար գոյութիւնս իսկ մոռացած կ'լինես: Այդպէս պատահեց, ի՛նչ արած. ուզեցի Բելջիկայէն յետոյ գրելիս գէթ մի լաւ ու միտիթարական բան ասած լինել քեզ իմ մասիս, մի շօշափելի ու իրական բան... չեղաւ:

Վերջին բացիկով¹⁵ արդէն յայտնել էի որ որպէս «Նուպարեան սան»¹⁶ անցայ Փարիզ, ապահոված լինելով միաժամանակ գործերուս հրատարակութեան մի մեծ կարեւոր գումար Փարիզում գանձելի¹⁷: Վերջինները մինչեւ արթնցայ օդ ցնդեցին, ինչպէս դու ես որակում... «ոջիլները» լիովին կատարելով իրենց պարտականութիւնը, մօտեցել են «Նուպարեան»[] վերջին աղբիւրիս էլ, տակաւին պայքարում եմ թէեւ, սակայն այդ էլ այն չէ, ինչ էր ու պիտի լինէր: «Անցորդը եւ իր ճամբան»¹⁸ հեղինակը լաւ կարող է ըմբռնել թէ ինչ եմ ասել ուզում: Կարճ, Զարեան ջան, «հուպ եմ տալիս»¹⁹ 3 կողմէ, կուռում եմ 3 ճակատի վրայ մի միայն գոյութիւնս պաշտպանելու համար: Դժւար

15 Բացիկը պահպանուած չէ:

16 Հ.Բ.Ը.Մ.ի հիմնադիրներէն եւ առաջին մախագահ Պօղոս Նուպար փաշայի (1851-1930) կողմէ 1924ին հաստատած յատուկ կրթաթոշակի արժանացած ուսանող:

17 1927-1928 ուսումնական մօր շրջանին ամբողջական կամ մասնակի թոշակ ստացող Նուպարեան սաներուն թիւը 18 եղած է: «Թոշակաւոր մօր սաներ»ուն կարգին (թիւով իմը) յիշուած է «Ոստանիկ Յովհաննէսեան (փիլիսոփայութիւն եւ հոգեբանութիւն)» (Հայկական Բարեգ. Ընդհ. Միութիւն. Ընդհանուր Տնդեսկագիր եւ Հաշուեկշիռ 23րդ Շրջանի (1928), տպ. Մասիս, Փարիզ 1929, 52):

18 ԶԱՐԵԱՆ, Կ., *Անցորդը եւ իր ճամբան*, ի Հայրենիք, Հոկտեմբեր 1926-Փետրուար 1928 (հմմտ. Նոյն, *Երկեր*, տպ. Կաթողիկոսութեան Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս 1975, 7-360):

19 «Հուպ եմ տալիս: Ուզում եմ ամօթի թողնել» (ԶԱՐԵԱՆ, Կ., *Անցորդը*, ի Հայրենիք, Փետրուար 1928, 36 (հմմտ. Նոյն, *Երկեր*, 358):

գործ, մինչդեռ ես եկել էի[,] այսինքն վերադարձել Փարիզ ուսանելու եւ կեանքս դասաւորելու համար, մի երկու տարի նուիրուելով խաղաղ աշխատանքի...:

Երէկ «Սաթօ»իդ²⁰ հետ «մանսարդ»էս²¹ դուրս էի հանել վերջին կտորը, «Պարլամենտի դրօշակ»ը²² եւ տարել Բիւլօնի անտառը[,] պարզել արեւին ու կանաչներին: Այդ մասին յաջորդիւ կը գրեմ երկար, բայց կարող ես գուշակել արդէն հըրճուանքս եւ ուրախութիւնս, այս ճղճիմ շրջաններում երբ երէկի ֆոտոտները այս օր ոչ միայն խոնարհւում՝ այլ եւ հետեւում են Զարեան[ի] ուղղութեան, երէկ[,] ասում են, Զարեան արժէք չէր, նոր գտաւ իր ուղղութիւնը, եւ այժմ միակ նոր տաղանդն է որ ստեղծում է իր դպրոցը: Թող այդպէս լինի թէեւ Զարեան է՛ր ինչ որ է[,] ասում եմ - եւ ուրախանում՝ սրա ու նրա մօտ սրբութեան պէս գուրգուրող շնորհ[ւ]ներով համար...:

Էլի՞ շարունակեմ. Զարեան իմ ընկերս է Պօլսէն, ասում է մէկը, մենք շատ լաւ մտերիմներ ենք, միւսը աւելացնում է[,] իմ ուսուցիչս է, մենք մենք մենք եւ այլն... ու նրանք նրանք են, որոնց ամենքին էլ ճանաչում ես Սէն Միշէլի կաֆէներում... Դէ այս բոլորից յետոյ, արդէն ես լուրս եմ եւ սպասում՝ մինչեւ որ նոր գործերով նրանց դուռը տանես ու ներողամտօրէն նայես նրանց վրայ... Ե[րրուանդ] Քոչարեանը²³ աղաչում է որ հասցէդ տամ. չտւի:

20 Կ'ակնարկէ «Անցորդը եւ իր ցամբան»ի կերպարներէն մէկուն, որ Զարեանի Երեւանի տան ծառան է եւ եռագոյն դրօշակ մը կը կախէ՝ վարագոյրի փոխան. «Սաթօ ջան, դու մեզ պիտի կործանես: Դրօշակը, Դաշնակցական դրօշակը, նայում է դրան, դուռը նայում է փողոցին, փողոցը նայում է միլիցիականների գրասենեակի, գրասենեակը՝ Զեկային, Զեկան՝ պետութեան, պետութիւնը՝ Մոսկուային, Մոսկուան՝ Լեւինին, Լեւինը՝ դամբարանի ձեղունին...» (ԶԱՐԵԱՆ, Կ., *Անցորդը*, ի Հայրենիք, Փետրուար 1928, 32: հմմտ. Նոյն, *Երկեր*, 348):

21 Վերմատուն՝ ֆրանսական շէմֆերու բնորոշ (ֆր. mansarde):

22 «Անցորդը եւ իր ցամբան»ի նախավերջին գլուխին խորագիրը: ԶԱՐԵԱՆ, *Անցորդը*, 29-38 (հմմտ. Նոյն, *Երկեր*, 342-359):

23 Հայրենի մկարիչ Երուանդ Քոչարը (Քոչարեան, 1899-1979) Փարիզ ապրած է 1923-1936ին, ուր շրջան մը գործակցած է Զարեանի հետ:

Նորութի՞ւն.- ինձմէ յետոյ Շիրակունու²⁴ կինը Հայաստան մեկնելէ առաջ կորցրեց 200 Ֆ.: Սարեան[ի]²⁵ (նկարիչ...) նկարները հրդեհ[ւ]եց[ին] նաւի վրայ տեղը չհասած²⁶ եւ ահա թէրլէ-մէզեան²⁷ (նկարիչ)[,] որ այս օր պիտի մեկնէր Հայաստան[,] մնում է մենակը կողոպտւած լինելու պատճառով: Դերասան [-] դերասանուհիները 3-րդ հրաժեշտի ներկայացումը տւին Հայաստան գնալու համար²⁸ եւ սակայն 4-ին կսպասեն, այնտեղ էլ Այվազեանը²⁹ վաղուց թրքացել է Պօլսում³⁰ ... ասում են պիտի վերադառնայ ամուսնացած:

24 Շիրակունի (Գուրգէն Քելլերեան, 1895-1937)՝ լրագրող: Նաեւ ստորագրած է Գ. Շիրակունի եւ Վազգէն Շիրակունի գրչանուններով (ՅՈՎԱԿԻՄԵԱՆ, Բ., Հայոց ծածկանունների քառարան, ԵՊՀ, Երևան 2005, 341 եւ 755): 1921-22ին «Հակատամարտ»ի խմբագրութեան անդամ էր, ուր հանդիպած էր Կ. Զարեանին: Ըստ Կարօ Գեորգեանի վկայութեան, «Գուրգէն շէն ու ընկերական տղայ էր եւ դաշնակցական, ըստ ամենայնի: Երբ փախանք Պոլսէն, կնոջը հետ գնաց ան Փարիզ, ուր մնաց քանի մը տարի: Ետքը, զարմանքով իմացայ, որ եղած էր դաւանափոխ եւ մեկնած էր Հայաստան: Ատ երթալն էր,- ա՛լ լուր մը չունեցանք իրմէ: ...Գուրգէն Շիրակունիէն լուր չունեցանք: Վստահօրէն ան ալ փակեց իր աչքերը Հայաստանի մէջ կամ աֆսոսալայրի մը մէկ անկիւնը: Դաշնակցականի իր անցեալը միայն պիտի բաւէր այս մոռալ ենթադրութիւնը ընելու» (ԳԵՈՐԳԵԱՆ, Կ., Ճակատամարտ ի հնգեակը, Ամենուն տարեգիրք, Պէյրութ 1964, 236-237, 242): Մահուան թուականը կր թուի հաստատել այս ենթադրութիւնը, թէեւ պարագաներուն մասին որեւէ տեղեկութեան հանդիպած չենք:

25 Մարտիրոս Սարեան (1880-1972)՝ հայրենի նկարիչ: Կ. Զարեանի հետ մտերիմ էր վերջինիս հայաստանեան շրջանին:

26 Մ. Սարեան Փարիզ ապրած է 1926-1928ին: Խորհրդային Միութիւն վերադարձի մաւում վրայ տեղաւորուած նկարները այրած էին հրդեհի մը ընթացքին:

27 Փանոս Թէրլեմէզեան (1865-1941)՝ հայրենի նկարիչ:

28 Հաւանաբար կ'անկնարկէ դերասան Լեւոն Երամեանի հրաժեշտի ներկայացումին (Մայիս 26, 1928), որուն մասնակցած են դերասանուհիներ Եկատերինա Դուրեան-Արմենեանը եւ Աստղիկ Երամեանը (Յաւաջ, 25 Մայիս 1928):

29 Նդիշէ Այվազեան (1890-1993)՝ արձակագիր:

30 Ե. Այվազեան 1922-28ին ապրած է Փարիզ եւ այնուհետեւ հաստատուած է Պոլիս, ուր ամուսնացած է օր. էլիզ Գաւուքեանին հետ:

Այժմ գրիր տեսնեմ ինչ ես անում. դու ինչպէս ես, չպի՞տի գաս, տիկինը երեխաներդ ինչպէս են, «Սանասարեան ժող. համալսարան»³¹ կողմից հրաւէր ստացա՞ր երեկոյի համար թէ չէ:

Ջերմ համբոյրներով քո
ՈՍՏԱՆԻԿ

Հասցէս՝ V. Ohanesian
5 rue des Carmes

Գ.

11-7-32
Փարիզ

Սիրելի Ջարեան

Նպատակս՝ քեզ գտնելը, քեզմէ ուղղակի կերպով լուր առնելն էր. ուրախ եմ որ այդ յաջողւեց ինձ գրքիս³² միջոցով. այլապէս քեզի գրելը հիմա, պիտի վարանէի, ինչպէս վարանած եմ այս երկու տարւայ ընթացքին անպատասխան մնացած վերջին նամակէս յետոյ³³:

Քաջալերանքիդ ու գնահատութեանդ համար զգացւած եմ. գիտեմ որ ամէն բանի մէջ, քեզ իսկ վնասելու չափ անկեղծ ես. սակայն եւ այնպէս մեր մամուլը այդ չ[ը]սաւ, չ[ը]սեր. ան խեղդած է ու կը խեղդէ լուին քու ընդգծած «իրական»-ը ցուցադրելու համար իր կեղծն ու չինծուն...:

Ոչ մէկ տող գրքիս մասին³⁴ եւ սակայն հո՞գս:

31 Այս հաստատութեան մասին որեւէ տուեալ չկրցամք գտնել:

32 ՈՍՏԱՆԻԿ, Արեւելէն Արեւմուտք, տպ. Արաքս, Փարիզ 1932:

33 Յիշեալ մամակը մեզի հասած չէ:

34 Ըստ երեւոյթիմ, Ոստանիկ չէր տեսած Անահիտի արձագանգը (ԶՊԱ-ՆԵԱՆ, Ա., Անահիտ, Քրոնիկ, Յունուար-Յունիս 1932, 181-182. Ստացանք, անդ, 191):

Ես նոյնն եմ. լաւ եմ[,] վատ եմ. չգիտեմ իսկապէս ինքս էլ թէ ինչպէս եմ. կաշխատիմ ու կը կարծեմ թէ կապրիմ, սատկելու համար սա մայթերուն վրայ³⁵: Ա՛խ եթէ կրնայի դուրս պրծնել Փարիզից, Ֆրանսայէն ընդհանրապէս:

Սիրով քու՝

ՈՍՏԱՆԻԿ

Յ.Գ. Յաջորդիւ կը գրեմ երկար. բարեւներս տիկնոջ[,] Նւարդին ու տղաներուդ. գրիր եթէ ժամանակ ունիս քու եւ գործերուդ մասին. մամուլէն կտրւած լինելով, ոչինչ չհասկացայ շուրջը եղած աղմուկներից, ոչ գրածներդ եւ ոչ էլ զոյգ հրատարակութիւնները չկարողացայ ձեռք ձգել³⁶, աններելի մի թերութիւն որ կամ նիւթականով եւ կամ սա մեմակութիւնից ազատելով միայն պիտի շտկուի:

ՆՈՅՆ

35 Շահան Շահնուր վկայած է Ոստանիկի այդ ժամանակաշրջանի սրտահմլիկ վիճակին մասին: Գուրգէն Մահարիին ուղղուած Յունիս 15, 1962 նամակին մէջ, ան գրած է. «Ճանջցած եմ նաեւ Ոստանիկ անուն արեւելահայ բանաստեղծ մը, որ յետին թշուառութեամբ մէջ ինկած էր: Ձեր այդ ծանօթն է որ ինծի փոխանցած է ձեր մէկ նամակը, որ տակաւին մօտս է, եւ որ կը կրէ 30 նոյեմբեր 1931 թուականը»: Իսկ Յուլիս 16, 1962ին անկցուցած է. «Ոստանիկը վերածուած էր խլեակի մը, եղած էր իսկական մուրիկ-դատարկապորտ մը, որ կը սպասէր ճաշարաններուն առջեւ, ուշ գիշերին, որպէսզի իրեն շնորհուր կերակուրի մնացորդներ: Մեր վիճակն ալ փայլուն չէր... օ՛հ ո՛չ» (ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ, Նամակահի, Բ. , ՔԷՕՍԷՆԱՆ, Գ. (կազմեց), Նամակներ Գուրգէն Մահարիին եւ Անդրամիկ Անդրեասեանին, Մայրենի հրատարակչատուն, Ութըրքատուն 2004, 18, 20):

36 Կ'ակնարկէ Մարտ 1932ին «Բանկօօպը եւ մամուրի ոսկորները» (ի Հայրենիք) ու «Նաւատումար թիւ 20» (ի Յուսարեր) գրութիւններուն մէջ Զարեանի արտայայտած կարծիքներուն, որոնք տեղի տուած էին Յառաջի մէջ զանազան հակազդեցութեանց, գլխաւորաբար՝ Շաւարշ Միսաբեանի կողմէ:

Դ.

24 սեպտ[եմբեր] 1946

Թեհրան

Սիրելի Կոստի,

Գրեցի քեզ եւ սակայն պատասխանը չստացայ³⁷։ Եթէ մոռացութեան չես մատնել ինձ, նշանակում է, որ նամակս քեզ չի՛ հասել։

Ուրախ եմ, որ Ամերիկեան երկնամերձ յարկերից ստեղծագործութեան թափդ իր զէնիթին ես հասցրել³⁸։

Վերջերս ստացւել էին սակաւաթիւ օրինակներ «Նաւը լեւրան վրայ»ից³⁹, սակայն մինչեւ հասնելս սպառւել էին։ Ուրախաւի՛ր՝ երեւոյթ այս անապատում... Վերստին պատւիրւած է, ստացւելիս կլի՛նունենամ։

Գրել էի արդէն, որ ոչ մեռած եմ, ոչ էլ հարստացած, բայց ամուսնացել եմ ու ծերացել։ Էջերս այլեւս լաւ չեն տեսնում։

Նիւթական պայմաններս վատ չեն եղել եւ չեն։ Բայց կշտացել եմ միջավայրիցս մինչեւ կոկորդոս։ Դժբախտութիւնը նրանումն է, որ ո՛չ ելք կայ, ոչ էլ ելքի հեռանկար։ Սխալս այն եղաւ, որ Փարիզից այս ուղղութիւնը վերցրի՛ն եւ այժմ տառապում եմ հոգեւին բռնւած՝ Բողբերեան⁴⁰ ձանձրախտով...։

Անհամբեր եւ կարօտով սպասում եմ նամակիդ, ուր պիտի կարդամ տեղեկութիւններ քո եւ ձերոնց մասին։

Կինս՝ Օլիկը, որ ճանաչում է քեզ արդէն այնպէս, ինչպէս ես, բարեւում է քեզ սրտանց։ Նամակդ ստանալիս, կուղարկեմ

37 Ոստանիկի վերոյիշեալ նամակը, գրուած՝ Օգոստոս 1946ին, պահպանուած չէ։

38 1942-47ին Կոստան Զարեան Նիւ Եորք նահանգին մէջ ապրած է։ Ամերիկեան գործունէութեան վերջին շրջանին մասին, տե՛ս *Կոստան Զարեան դասախօս Ասիական Ուսմանց Կեդրոնին մէջ, ի Ալիք, 22 Նոյեմբեր 1946*։

39 ԶԱՐԵԱՆ, Կ., *Նաւը լեւրան վրայ*, տպ. Հայրենիք, Պոստըն 1942։

40 Շառլ Պօլէո (1821-1867)՝ ֆրանսացի նշանաւոր բանաստեղծ։

քեզ մի օրինակ իմ «Ներաշխարհ»⁴¹ից, որ լոյս է տեսել 1942-ին եւ սպառուել միայն այստեղ:

Ջերմօրէն քո՝
ՈՍՏԱՆԻԿ

Յ.Գ. Երկու օր առաջ, տեղիս երիտասարդ գրողները իրենց հերթական վերջին նիստը նւիրել էին քո եւ քո գործերին: Հրաւիրել էին ներկայ գտնւելու եւ զարմացան անգամ, որ չմերժեցի ըստ սովորութեանս: Պիտի ասեմ, որ ես էլ զարմացայ նրանց կատարած աշխատանքի եւ խորացումների վրայ⁴²: Անծանօթ էին միայն քո կենսագրութեան, «Օրերի պսակին» եւ գործունէութեանդ: Տւի, որոշ ծանօթութիւններ, եւ խրախուսեցի կատարած աշխատանքը: Ինձ համար առաջին, անսպասելի մի երեկոյ էր: Յաջորդ նիստը «Տատրագոմ»⁴³ի դատարարութիւնն է: Ստիպւած եմ վերստին ներկայ լինելու, եւ արտայայտելու կարծիքս այդ առթիւ:

ՆՈՅՆ

Ե.

1946 դեկտ[եմբեր] 8

Թեհրան

Փոստին եմ յանձնում միայն

օրերս՝ 1947 փետրուար 8

Սիրելի Կոստի,

Մէկը միւսի ետեւից (երկու օրւայ տարբերութեամբ) հասել են՝ 17 օգոստ[ոս] եւ 1 նոյեմբ[եր] թուակիրներդ:

41 ՈՍՏԱՆԻԿ, Ներաշխարհ, տպ. Մոդերն, Թեհրան 1942:

42 Հաւանաբար կ'ակնարկէ «Նոր էջ» խմբակցութեան: Յետմահու ակնարկին մէջ, հանդէսի խմբագրութիւնը գրած էր. «Նա ջերմ եւ ընկերական յարաբերութիւնների մէջ էր Նոր էջի անդամների հետ եւ միշտ հետաքրքրուում էր Նոր էջի գործունէութեամբ» (Ոստանիկ, 82):

43 ԶԱՐԵԱՆ, Կ., Տատրագոմի հարսը, տպ. Հայրենիք, Պոստըն 1930:

Կարող ես երեւակայել, թէ ի՞նչ ուրախութեամբ ու հրճ-
ւանքով եմ բացել, տասնեակ տարիներ յետոյ, առաջին նամակը:
Սակայն, մտքովդ անգամ չի անցնի այն դժարութիւնը, որ կրել
եմ, այդ նոյն նամակը կարդալիս: – Սկզբում թւում էր թէ լոյսը
նւազ է, յետոյ թէ՛ ակնոցներս փոշոտ են. ի վերջոյ սկսեցի կաս-
կածել եւ գրեթէ այն եզրակացութեան հանգայ [sic], որ նամակդ
կեղծուած է... Չերկարացնեմ: Հանեցի հին գրութիւններդ ու
սկսեցի համեմատել: Բանից դուրս եկաւ, որ ո՛չ այս էր, ո՛չ այն,
այլ տարիների ընթացքում գրութիւնդ էր փոխւել: Տառերը
հետզհետէ կորցրել են իրենց երկարութեան չափն ու աստիճանը,
ու հաւասարւել, դարձել են միաչափ միատեսակ տառ ու գրու-
թիւն:

Ի՞նչ խօսք, որ այս գիւտից յետոյ, նամակդ կարդացի սա-
հուն, գոհ եւ ուրախ:

Ոտանաւորիս թարգմանութիւնը թող քեզ մտահոգութիւն
չպատճառի: Դա՛ ես ղրկել էի ի միջի այլոց: Չեմ ուզում, որ
մտահոգւես առանձնապէս նաեւ «Նաւ»դ ինձ ղրկելու խնդրով:
Այժմ, այստեղ ձեռք բերելը դիւրացել է. այսինքն պատւիրւած է
եւ կ[ը] ստացւի շուտով: Եթէ առաջին նամակիս մէջ ակնարկել
էի այդ մասին, պատճառը այն էր, որ այդ ժամանակ, ամբողջ
Թեհրանում միայն մի օրինակ՝ ե՛ւ կար ե՛ւ չկար: Անցնում էր
ձեռքէ-ձեռք ու տեղի տալիս նոյն իսկ վէճի ու աղմուկի: Տեղն
է. գրեմ, ծիծաղիր: –

Մի անգամ «Նոր Աղբիւր»⁴⁴ իմ գրասենեակից (որ կից
էր «Ալիք» օրաթերթի⁴⁵ գրասենյակին [sic]) լսեցի մէկի ձայնը.
«Եղբայր, – ասում էր նա ջղայնացած, – “Նաւ”ն անցել է, ոչ միայն
մեզ անծանօթ եւ օտար մարդկանց շրջանը, այլ եւ դուրս է ելել
քաղաքից եւ ամառանոցներումն է շրջագայում, մինչդեռ մենք,
այս կրակի տակ, քրտնախաշ, հերթի ենք սպասում ամիսներով
ու երեսն անգամ չենք տեսնում, սա ի՞նչ խայտառակութիւն է»
եւ այլն:

Ահա այս շրջանին եմ գրել նամակս ուր եւ ակնարկել
«Նաւ»դ ղրկելու մասին: (Կարծեմ 1946 թ. օգոստոսին)⁴⁶:

44 «Նոր Աղբիւր» (1943-1946)՝ մամկական պարբերաթերթ, որուն խմբագի-
րը Ոստանիկն էր:

45 «Ալիք» (1931)՝ իրանահայ օրաթերթ:

46 Տե՛ս ծանօթ. 36:

Այժմ մի ուրիշ խնդիր... կնոջս կողմից... ղրկիր ինձ լուսանկարդ. եթէ չունես էլ նկարւիր եւ... ղրկիր: Զարմացել է, որ ես այդ մասին չեմ մտածել ու հոգացել ցարդ. իրաւունք ունի: Անհոգ եմ եղել. անգամ կենսագրութիւնդ, որ կարող էի ժամանակին վերցնել, գրի առնել[,] չեմ արել՝ եւ այժմ, երբ պէտք ունեմ, չգիտեմ, ձեռքիս տակ չունեմ:

Գրեցի՞ քեզ, որ «Նաւ»իդ եւ ապա «Տատրագոմ»ի դատաւարութիւնն ու դատախօսութիւնը կազմակերպելիս, տեղիս երիտասարդ գրողները խնդրել էին ինձ ներկայ[յ] գտնւել եւ պէտք եղած ծանօթութիւնները տալ իրենց: Ի հարկէ պէտք եղած լուսաբանութիւններն ու տեղեկութիւնները տւի, սակայն կենսագրութեանդ մասին խոստացայ մի այլ առիթով հանգամանալից անդրադառնալ: Այժմ այդ բացն ուզում եմ գոցել: Ղրկիր ինձ ուրեմն լուսանկարդ եւ կենսագրութիւնդ: Նաեւ ինձ խոստացած կտորդ, եթէ պատրաստ է:

Իմ մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ էիր ուզել:

Ահա՛ այնքան, որքան կարելի [է] առ այժմս:-

1934ին, ինքս էլ չիմացայ ինչպէս, բայց ընկայ այստեղ՝ Թեհրան:

Սկզբում զբաղւում էի մասնաւոր դասերով: Յետոյ զանազան կողմերից պաշտօնավարելու առաջարկներ ստացայ, սակայն չուզեցի Թեհրանից հեռանալ եւ մտայ տեղիս միջնակարգ դպրոց⁴⁷ որպէս սոսկ ուսուցիչ. կինս՝ այդ ժամանակ օրիորդ, նոյնպէս պաշտօնավարում էր այդ դպրոցում: Յետագայում երբ կառավարութիւնը փակեց մեր դպրոցները⁴⁸, մենք ամուսնացանք եւ երկուսով շարունակեցինք մեր մասնաւոր դասերը, մինչեւ որ վերստին՝ ահա, մի քանի տարի է դպրոցը վերաբացւած է եւ երկուսով նորից պաշտօնավարում ենք:

47 Ոստանիկ 1932-1954ին, փակումի ընդմիջումով, պաշտօնավարած է Թեհրանի «Քուշէշ-Դաւթեան» վարժարանին մէջ:

48 Ռեզա Փահլեւի շահը (1878-1944, գահակալած՝ 1925-1941) 1936ին փակած էր հայկական դպրոցները: Թեհրանի դպրոցները վերաբացուած են 1942-43ին, իսկ Թաւրիզի դպրոցները՝ 1957-58ին:

1935-ին հրատարակել էմ իմ «Երգ երգոց»ը⁴⁹ որ սպառնաց տեղում միայն: Նոյն թվին՝ մի մանկական գործ՝ «Շահէնի խրճիթ»ը⁵⁰ (գլորոցի հրատարակութիւնը): 1942-ին հրատարակել էմ «Ներաշխարհ»ս, որից ահա մի օրինակ ղրկում են քեզ: Այս առթիւ գրիր ինձ անվերապահ կարծիքդ: Կարիք էմ զգում՝ անկեղծ ու ճշմարիտ խօսքի: Այդ դու ունես: Երկար ժամանակ է՝ 12 տարի, որ քեզ լսելու առիթ չեմ ունեցել: Դառնացել էմ այս զարհուրելի՝ եւ արտառոց այլ եւ միակողմանի զրական դատումներ կարդալուց: Ա՛յն, որ արտասահմանեանն է կամ գաղութային ու մի քանի մարդկանց մենաշնորհը, իրենց «Ապիս» եզան⁵¹ «իրաւ» եւ ոչ «իրաւ» պատգամներով սրբացած⁵², եւ ա՛յն, որ Երկրինն է, իրենց «հնդկահաւ» «վարպետ»ին⁵³ ու շուրջը բոլորած «մոնթեր»ինը:

Նիւթիցս սկսեցի հեռանալ: «Ներաշխարհ»ից յետոյ ոչ մի բան չեմ կարողացել հրատարակել՝ թէեւ ունիմ մի քանի բան: 1943-ին հիմք դրի մի մանկական հրատարակութեան «Նոր Աղբիւր» անունով, որ շարունակ[ւ]եց մինչեւ 1946 եւ դադարեց⁵⁴: Նմուշի համար մի երկու երեք համար կուղարկեմ, տաս մի երեխայի:

Անցեալ ամառը, մի զրատուն բանալու միտքը մղեց ինձ բաւական ծախսի տակ ընկնելու, բաց արի, սակայն լքած վիճակի մէջ մնացել է ցարդ. հաւանաբար ծախեմ. ինձնից առեւտրալկա՞յն դուրս չի գալ[ի]: Եկան, խաբեցին, գողացան, մի խօսքով ակնոցներս անգամ թռցրին:

Տնտեսական պայմաններս վատ չեն: Ապրում ենք բաւական լաւ. մեր ազատ ժամերը նւիրել ենք միայն ու միայն կարդալու. իսկ կարդում ենք, ինչ որ ձեռներս է ընկնում, ուրիշ ճար չկայ:

49 ՈՍՏԱՆԻԿ, Երգ երգոց, տպ. Մոդերն, Թեհրան 1934: 1935 թուագրումը պետք է վերագրել յիշողութեամբ վրէպի մը:

50 ՈՍՏԱՆԻԿ, Շահէնի խրճիթը. ժողովրդական պատկերազարդ. հէֆեսթ, տպ. Մոդերն, Թեհրան 1935:

51 Հիմ եգիպտական կրօնի սրբազան եգը:

52 Կ'ակնարկէ արեւմտահայ վիպագիր ու բնագետ Յակոբ Օշականին (1883-1948):

53 Կ'ակնարկէ արեւելահայ բանաստեղծ Աւետիք Իսահակեանին (1875-1957):

54 Տե՛ս ծնթ. 43:

Ուրախ եմ, որ տղաներիցդ լուր ունես եւ առաջին իսկ պատեհութեան վերադառնալու ես Եւրոպա՝ նրանց մօտ: Ես եւս պատեհ առիթ եմ փնտռում դուրս գալու այս գութից. այս անգամ կնոջս հետ:

Զերմօրէն քո՝
ՈՍՏԱՆԻԿ

Կիներ՝ Օլիկը յանձնարարում է չմոռանալ իր անկեղծ եւ լաւագոյն զգացումներով բարեւները հաղորդել քեզ եւ վերստին չեչտել՝ մոռացութեան չտալ իր խնդրած նկարը:

ՆՈՅՆ

Զ.

22-IV-47

Թեհրան

Սիրելի Կոստան

Մի քանի օր առաջ, ստացայ նամակդ: Նկարդ մեծ ուրախութիւն պատճառեց թէ՛ ինձ եւ թէ՛ մանաւանդ կնոջս՝ Օլիկին, որ չըջանակի մէջ առաւ իսկոյն, որպէսզի դուրս չտամ քլիշէի համար:

«Նաւը լերան վրայ» գնել եմ վերջապէս. եթէ Օլիկի ցանկութեանն ընդառաջելու լինեմ, պիտի դրկեմ, որ յատկապէս իր անունով մակագրես: Տարօրինակ ցանկութիւն: Բարեւում է քեզ եւ շնորհակալութիւն է յայտնում թէ՛ նկարիդ եւ թէ՛ իր հանդէպ տածած անկեղծ զգացումներիդ համար:

Ես եւս, ահա ներփակում եմ ոչ թէ նկար, այլ մի յօդաած, որի բովանդակութեանը՝ թերեւս ինձմէ՛ առաջ վերահասու ես եղել արդէն, բայց չգիտե՛ս ինչ հրճանքով եմ կարդացել այդ՝ Նւարդիկիդ (այժմ Նւարդ) յաջողութիւնը:

Կասկածում եմ, որ կարողանաս վերադարձի մտադրութիւնդ լաւագոյնս իրագործել: Սակայն որքա՛ն լաւ կլինէր եւ մեզ համար ի՛նչ ուրախ ու սիրելի անակնկալ, եթէ այստե՛ղ գալու ցանկութիւնդ իրագործէիր նախ: Դա մի պատեհութիւն կլի՛նէր քեզ համար արեւելքն ու իր պատմական վայրերն աւելի մօտիկից դիտելու եւ որ գլխաւորն է, գէթ մէկ տարով, հանգստանալու մեզ մօտ եւ ուրեմն՝ կարգի բերելու աշխատութիւնները:

Ի դէպ, ի՞նչ նոր գործեր ունես եւ ի՞նչ հեռանկար՝ հրատարակութեան:

Ձէ՛, կատակ չեմ անում եւ ոչ էլ արեւելեան կեղծաւորութիւն: Իսկապէ՛ս եկ մեզ մօտ, նախ քան Ներոպա անցնելը: Մեր պայմանները վատ չեն. ի վերջոյ, արեւելք է այս տեղ: Եկ այնպէ՛ս ինչպէս թէ տունդ ես գնում, իսկ տանդ դռներն ու սրտերը լայնօրէ՛ն մշտաբաց են առջեւդ:

Գիրքս հասած պիտի լինի կարծեմ, զարմանալի է, որ այդքան ուշ է հասնում սովորական թղթատարը, մինչդեռ նամակդ՝ օգտատարով եկել է 15 օրում...

Խոստացած նիւթդ էլ ուղարկիր: Շուտով դպրոցները կարձակենք եւ կսկսեմ ամսագրով զբաղել⁵⁵: Առ այժմ գլուխներս դդում է դարձել 1250 աշակերտների՝ այլ եւ ուսուցչական ժողովների մէջ, այն էլ այնպիսի ժողովների, ուր համբերութիւն է պէտք հաւասարակշռութիւնը չկորցնելու համար: Ես եւ կինս այդ վիճակում էինք: Բարեբախտաբար միջոցորտը պարզել է:

Սիրալիւր ու ջերմ բարեկներով՝
ՈՍՏԱՆԻԿ

Է.

21 փետր[ւար] 1948
Թեհրան

Սիրելի Կոստան,

Նամակդ ստացայ եւ անմիջապէս գրեցի Փէ[հ]լէվի⁵⁶, գտնելու համար «Կիսեղբօրդ»՝ Բաբա Գասպարեանին: Պատասխանն ստանալուն պէս կը հաղորդեմ քեզ արդիւնքը: Շատ երկար չի տեւի: Փէհլէլին [sic] նաւահանգիստ է: Հայերի թիւը՝ քիչ: Ունեն մի մատուռ[,] մի քահանայ եւ մի դպրոց:

55 Կ'ակնարկէ գրական ամսագրի մը հրատարակութեան ծրագրին:

56 Պարսկական էնգելի նաւահանգիստը՝ Կասպից ծովուն վրայ, որ Փահլեվի հարստութեան ժամանակ անունը փոխած էր:

Ինչ վերաբերում է համագումարին⁵⁷ մասնակցելու խնդրին, չա՛տ դժվար է: Անձնական միջոցներս թոյլ չեն տալիս, իսկ այլ հեռանկար, առ այժմս չկայ: Սակայն գեղեցիկ գաղափար է. պիտի աշխատեմ այդ ուղղութեամբ մտածել եւ միջոցներ որոնել: Գտնել մի տա՛ք գրական միջնորդութեամբ, ինձ համար համահաւասար է հանգստի եւ կազդուրման, իսկ թէ ի՛նչ ուրախութիւն պիտի պատճառէ ինձ հանդիպել քեզ ու Նարդիկին, երեւակայել չես կարող: Իկ մասնիկը չկրճատեցի, որովհետեւ ես նրան պատկերացնում եմ այսպէս. - Գրքերը թեւի տակ 2 rue Tournefort-ից⁵⁸ դպրոց գնալիս ու վերադառնալիս, ասպազայ արւեստագիտուն հոգի տը դէմքին - արժանի՛ զաւակ: Նա ինձ յիշո՞ւմ է արդեօք: Բարեւներս:

Ոչինչ չէիր գրել քեզնից: Չիմացա[յ] ինչո՞ւ թողիր Ամերիկայի պարբերականդ⁵⁹: Նոր հրատարակելիք հատորդ որտեղ ես հասցրել⁶⁰: Ի՞նչ լուր ունես Կարդարէլուց⁶¹ եւ միւսի, որի անունը մոռացել եմ: Ի դէպ այստեղ քեզ ծանօթ երկու հոգի՝ Մուշեղ Յակոբեան եւ Արծրունի Նազարբէկեանը քեզ լաւ յիշում են Բրուքսէլից իրենց ուսանող եղած ժամանակ:

Մինչեւ Լիբան[ան] մեկնելդ դեռ բաւական ժամանակ կայ⁶², սակայն ուզում եմ նախօրօք ասել քեզ, որ չմոռանաս եւ իմ թարգմանը հանդիսանալու, եթէ գալս չյաջողի:

Ձերմ բարեւներով
ՈՍՏԱՆԻԿ

57 Կ'ակնարկէ Միջին Արեւելքի Հայ Գրողներու Համագումարին, որ գումարուած է Շքորա (Լիբանան), Սեպտեմբեր 1948ին:

58 Զարեանի փարիզեան քնակավայրերէն մէկը, հաւանաբար՝ 1924-1925ի շրջանին:

59 Կ'ակնարկէ Զարեանի խմբագրած ու Նիւ Եորք հրատարակուած *Armenian Quarterly* հայագիտական պարբերականին, որմէ միայն երկու քիւ լոյս տեսած է 1946ին:

60 Խօսքը քերես 1948ին հրատարակելի անգլերէն քանաստեղծութիւններու հատորի մը մասին է, որ լոյս տեսած չէ:

61 Վինչենցո Գարտարելի (1887-1959)՝ իտալացի քանաստեղծ:

62 Թէւ Զարեան սկզբնապէս ծրագրած էր Լիբանան մեկնիլ համագումարին առիթով, այնուհետեւ ան հրաժարեցաւ իր մտադրութենէն:

Յ.Գ. Վաղևայ թվից սկսած «Ալիք» կուղարկվել քեզ: Փարիզի «Յառաջ»⁶³ կարդացի որ Չոպանեանը⁶⁴ քո մասին դասախոսութիւն է տալիս: Մոռացայ հարցնել. «Բազմավէպ»ի⁶⁵ հարիւրամեակին եղա՞ր Վենետիկ, թէ ոչ⁶⁶:

Ը.

31 օգոստ[ոս] 1948 թ.
Թեհրան

Սիրելի՛ Կոստան,

Կարծում եմ, որ դեռ իսկիայումն ես⁶⁷, որովհետեւ ըստ նամակիդ, երկար պիտի մնայիր այդ տեղ՝ բլրան վրայ, ըմպելու մարեմխոտի հոտն ու անապական գինին: Անո՛ւշ: Ամեն պարագային տեղդ կիմացնես միշտ:

Գրիր այս անգամ մանրամասն՝ առողջութեանդ, Նւարդի ու միւսների մասին, նաեւ՝ գործերիդ: Ի՞նչ եղաւ հատորիդ հրատարակութեան հարցը, պարբերականիդ խնդիրը: Չե՞ս կարծում, որ ներկայութիւնդ անհրաժեշտ է հայաշատ մի գրական կենտրոնում, որքան էլ հոգու խաղաղութեան համար առանձնութիւնն նախընտրելի լինի: - Իմ կարծիքով, եթէ նպաստաւոր պայմաններ ստեղծեն, նիւթական տեսակէտով, անհրաժեշտ է քեզ արեւելքն էլ մօտիկից ծանօթանալու համար. նոյնը՝ ե՛ւ տիկնոջ⁶⁸ ե՛ւ Նւարդին:

Ես լաւ եմ. կինս նոյնպէս: Արձանագրութիւններն սկսել ենք արդէն բայց պարապմունքները պիտի սկսեն 25-ին: Փէհլէւիից լուր ստանում ես անշուշտ: Ես չը գնացի: Սոսկալի ժխոր

63 Յառաջ (1925-2009)՝ ֆրանսահայ օրաթերթ:

64 Արշակ Զօպանեան (1872-1954)՝ ֆրանսահայ գրագէտ:

65 Բազմավէպ (Վեմետիկ, 1843)՝ Միսիթարեան Միաբանութեան հայագիտական պարբերական:

66 Բազմավէպի հարիւրամեակը մշուած է 1947ին: Զարեան մասնակցած չէ:

67 1948-1951ին Զարեան ապրած է իտալական Իսկիա կղզիին մէջ:

68 Կ'ակմարիկէ Զարեանի երկրորդ կնոջ՝ Ակարչուհի Ֆրանսիս Պրաւֆս-Զարեանի (1900-1963):

է եղել եւ խռնում. մի քանի հոգի խեղդւել են, անհանգիստ ծով է:

Լիբանանի համագումարը սկսում է շատ սահմանափակ չրջանակում եւ տեւելու է 3 օր.- սեպտ[եմբեր] 18, 19, 20: Այս-տեղից զնալու համար մեծ ծախս է պէտ[ք] մի ուսուցչի մի տարեկան համեստ ռոճիկ... Մի հոգի ուղարկում են կարծեմ⁶⁹:

Զերմ բարեւներով

ՈՍՏԱՆԻԿ

Յ.Գ.- Նամակս դեռ թղթատարին չը յանձնած, հանդիպեցի պրոֆ[եսոր] Վ. Գալանդարեանին⁷⁰, որ եկել է մի քանի դասա-խօսութիւններ տալու⁷¹: Հրաւիրեցի մեզ մօտ: Մեծ գովեստով էր խօսում տիկնոջը եւ երեխայիդ մասին⁷²: Վերջինիս գոյու-թիւնն ինձ համար նորութիւն էր: Յատուկ բարեւներս տիկնոջ եւ այս ապագայ մեծ մարդուն:

ՆՈՅՆ

69 Համագումարին իրամահայ որեւէ գրագետ ներկայ գտնուած չէ: Համագումարի քարտուղար Միմաս Թէօլէօեան՝ վազգէն վանանդեան գրչա-նունով լոյս ընծայած մանրամասն հաշուետուութեան մէջ, նշած է, թէ «Թէհրանի գրողներուն կողմէ Լիբանան հասաւ քանաստեղծ Արամ Գառնէ՝ Համագումարի աւարտումէն վերջ, քայք հաղորդակից պահուեցաւ համագումարի բոլոր հարցերուն ու եզրակացութեան» (ՎԱՆԱՆԻԵԱՆ, Վ., Միջին Արեւելքի Հայ Գրողներու Համագումարը, անոր անհրաժեշտութիւնը եւ քաջումը, ի Հայրենիք, Նոյեմբեր 1948, 102):

70 Վահան Գալէմտէրեան (1891-1950)՝ ամերիկահայ իրաւաբան ու քաղաքա-կան գործիչ: 1945ին Ամերիկա-Հայկական Մշակութային Ընկերակցութեան հիմնադիր անդամներէն եղած է Զարեանի հետ:

71 Սեպտեմբեր-Նոյեմբեր 1948ին Վ. Գալէմտէրեան շրջապտոյտի մը ձեռ-նարկած էր, դասախօսական ու այլ նպատակներով այցելելով Հոլանտա, Ֆրանսա, Իտալիա, Սուրիա եւ Թեհրան: Այդ առիթով, «Democracy: A Way of Life» խորագրուած դասախօսութիւնը հրատարակուած է առան-ձին գրքոյով՝ անգլերէն եւ պարսկերէն (Փաստաբան Վահան Գալէմտէ-րեան Ներքա մեկնած, ի Հայաստանի Կոչմակ, 18 Սեպտեմբեր 1948, 907-908. տե՛ս նաեւ Վշտակիւր Բարեկամ, Փաստաբան Վահան Գալէմտէ-րեանի մահը, Հայաստանի Կոչմակ, 21 Հոկտեմբեր 1950, 102-103):

72 Կ'ակնարկէ Ֆրանսիս Պրոֆսի հետ ունեցած զուակիմ՝ ուսողագէտ Յո-վան Զարեանին (1930):

Թ.

8 յունւար 1949 թ.
Թեհրան*Սիրելի՛ Կոստան,**Պատասխանս չատ ուշացաւ այս անգամ ու չա՛տ պատճառներով: Չարժէ անդրադառնալ:**Շնորհակալ եմ, որ լիովին բաւարարել էիր հետաքրքրութիւնս՝ քո եւ ձերոնց մասին հաղորդած լաւ տեղեկութիւններով: Յոյս ունեմ, որ առողջութիւնդ էլ վերագտած կ[ը] լինես արդէն:**Ինձ շատ է ուրախացրել որոշումդ՝ մեկուսացումից դուրս գալ, «մօտից զբաղելու համար գրական հարցերով»: Այդ տեսակէտից Լիբանանը լաւագոյն վայրն է: Զուր ես մերժել քեզ եղած հրաւէրը: Այս տարի նման բան չանես⁷³: Այն տեղից հնարաւոր է չրջել ե՛ւ արեւելեան միւս՝ մերձակա[յ] երկրները. մի բան, որ ցանկացել ես վաղուց եւ որ չափազանց արդիւնաւոր կարող է լինել թէ քո նոր գործերի համար եւ թէ տիկնոջը՝ նկարչական տեսակէտով: Այս՝ անշո՛ւ[շ]տ, եթէ քաղաքական [խ]աղաղ պայմաններ լինեն: Այս տողերը գրելիս սակայն տարւած եմ ենթադրելու, որ կապերդ խզել ես արդէն Լիբանանի հետ, որովհետեւ, հակառակ «Նայիրի»ի⁷⁴ մեծադղորդ յայտարարութեանը⁷⁵, էլ չես աշխատակցում նրան⁷⁶: Պատճառն ի՞նչ է: Ի դէպ, այդ ամսագրում լոյս տեսած «Ես կամ, կամամ»դ⁷⁷ այստեղ, հայ մշակոյթի*

73 Զարեան Լիբանան հաստատուած ու ապրած է 1951-1954ին, թէւ առանց ընդառաջելու յատուկ հրաւերի մը:

74 Նայիրի (1942-1951, ընդմիջումներով)՝ սուրիահայ գրական ամսագիր, Անդրանիկ Ծառուկեանի խմբագրութեամբ: 1952-1983ին Ծառուկեան հրատարակած է Նայիրի շաբաթաթերթը Պէյրութի մէջ՝ գրական ու հանրային բովանդակութեամբ: 1990ական թուականներուն Նայիրին սկսած է վերահրատարակուիլ՝ Ժիրայր Նայիրիի խմբագրութեամբ:

75 Նայիրի, Փետրուար 1948, 11:

76 Զարեան Նայիրիին աշխատակցած է 1947-1948ին: ՄԱՏԹԵՈՍԵԱՆ, Վ. - ՏԷՅԻՄԷՆՃԵԱՆ, Ս., Կոստան Զարեան եւ Անդրանիկ Ծառուկեան, Ի Բագին, 3 (2002), 91-110 (հմտ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ, Վ., Գրական-քանասիրական ուսումնասիրութիւններ, Անթիլիաս, հրտ. Գեորգ Մելիտիսեցի Գրական Մրցամակի, թիւ 70, 270-285):

77 ԶԱՐԵԱՆ, Կ., Ես կա՛մ, կը մնա՛մ, Ի Նայիրի, Մարտ 1948, 93-96:

տօնին արտասանող մի մատղաշ օրիորդ՝ ամբողջովին սարսուռ ու յուզում, որոտընդոստ ծափեր խլեց 2000-ի աւելի հանդիսականներից⁷⁸ :

Իմ ամսագրի խնդիրն էլ գլուխ չեկաւ, մասնաւորապէս արտօնութեան՝ եւ ապա տեղի անմիաբան ուժերի պատճառով: Սրանք՝ զանազան հոսանքի ենթակա[յ] լինելուց բացի, ունեն եւ ներքին քեւեր ու խմբաւորումներ, որ առաջացել է արտաքին, ջլատող ազդակներից մասամբ, մասամբ էլ փառասիրութեան ու շահախնդրութեան մարմաջից:

Տեղումս լոյս է տեսնում մի օրաթերթ՝ «Ալիք» եւ մի եռօրեայ՝ «Վերածնունդ» անունով⁷⁹: Վերջինս քուրջի մի կտոր է, աւելի շուտ՝ փողոց ու յառաջդիմական...

Գրական կոչւած տարրը այս թերթերի շուրջն է պտտում եւ կամ օրացոյցների: Երկար տարիներէ ի վեր մի տեսակ օրացոյցային է տեղիս գրական կեանքը: Վերջին երկու-երեք տարիների ընթացքում, նրանք որ թիկունք ունեն կամ փող, հատորներ էլ հանեցին ու փառաւորւեցին՝ իւրաքանչիւրը իր հոսանքի կողմից՝ տեղումս թէ արտասահմանեան մամուլում՝ յանձնարարեալ...

Քեզ գիրք ղրկողը աւելի շուտ նկարիչ է⁸⁰ . վերջերս էլ քեզ իր նկարներից է ղրկել՝ տօների առթիւ: Գաղափարով յառաջդիմական է եւ նիւթապէս՝ ապահով: Յամենայն դէպս դրանով կարող ես չափել միւսների արժէքը, որոնք քիչ առաւելութիւններով եւ կամ նազ՝ ուժեր են: Բայց բոլորն էլ «մեծարժէք» եւ թունդ «իրանահայ»: Սրանց մէջ ես զինաթափ եմ եղել, լքել ինքս ինձ, լքած լինելով եւ անտեսելով ընդհանրապէս մեր

78 Հոկտեմբեր 22, 1948ին Թեհրանի Դիւանա շարժանկարի սրահին մէջ տեղի ունեցած է հայ մշակոյթին նուիրուած համդէս (Հայ մշակոյթի տօնը, ի Ալիք, 22 Հոկտեմբեր 1948): Սակայն, տեղեկատուութեան մէջ Ջարեանի անունը նշուած չէ:

79 Վերածնունդ (1930-1960)՝ իրանահայ եռօրեայ, խմբագիր՝ Հայկ Գարագաշ:

80 Կ'ակնարկէ բանաստեղծ ու նկարիչ Դեւիմ (Մարգար Ղարաբեգեան, 1901-1975), որ քթաակցութիւն ունեցած է Ջարեանի հետ (տե՛ս ՄԱՏԹԷՆՈՍԵԱՆ, Վ., *Էջեր Կոստան Ջարեանի մամականիէն*, ի Բանբեր Նրեւանի համալսարանի, 1999, 2, 150-154):

արտասահմանեան մամուլից, սպասելով, որ մի օր դու կամ մէկ ուրիշը պիտի մտրակի այս անարդարութիւնը...

Օրացոյցների մասին խօսեցի. շատ են: Լաւագոյնը «Րաֆֆի»ն է, որի կազմողը իմ դպրոցական պաշտօնակիցն է⁸¹, եղած ուժերից ամենապատրաստածներից մէկը: Տարիներից ի վեր նկարդ եւ մի արտատպութիւն կամ ծանօթութիւն զետեղում է իր զոյգ օրացոյցներում՝ զրպանի ու պատի⁸²: Այս անգամ, իմ բացակայութեան եւ մոռացութեան պատճառով, մնացել է նախկին հաղորդածս՝ Ամերիկա եղածդ ժամանակայ տեղեկութիւնը: Շարունակ խնդրում էր հասցէդ՝ օրացոյց ղրկելու համար. այս տարի տւել եմ: Ստանալիս, արժէ, որ մի երկտող գրես իրեն⁸³: Աւելի՛ արժէ քան ոեւէ մի այլ մէկը: Օրացոյցի մէջ ինձնից էլ մի կտոր կայ: Դա անուղղակի պատասխան է հանգուցեալ Օշականին⁸⁴ եւ նւիրած քեզ: Դժբախտաբար օրացոյցի համար խնդրած ժամանակը, դպրոցում դասամիջոցին այնքան շտապ եւ յիշողութեամբ գրի առի ու յանձնեցի, որ լոյս տեսնելուց յետոյ միայն անդրադարձայ, որ նւիրումը մոռացւել էր: Դա կուղղեմ ոեւէ ամսագրի մէկ հատորում⁸⁵:

Էլ ինչ գրեմ: Այնքան միութիւններ կան, որ հաշւել չեմ կարող: Դրանցից մէկը վերստին «Տատրագոմ»դ դատաւարութե-

81 Կ'ակնարկէ Տաճատ Պօղոսեանին (1905-1981)՝ կուսակցական գործիչ, խմբագիր եւ ուսուցիչ: Ան 1942-1949ին հայոց լեզուի եւ պատմութեան ուսուցիչ եղած է «Փուշէշ-Դաւթեան» դպրոցին մէջ:

82 «Րաֆֆի» պատի օրացոյցը սկսած է լոյս տեսնել 1941ին՝ Տաճատ Պօղոսեանի հրատարակութեամբ, եւ ցարդ կը շարունակուի (ԲԱԼԵԱՆ ՏԵՐԵԱՆՈՐԵԱՆ, Բ. եւ Ս., Պատմութիւն իրամահայերի, Ալֆո տպարան, Գլենդէլ 1985, 111): Րաֆֆի գրպանի օրացոյցն ալ սկսած է լոյս տեսնել 1941ին՝ Պօղոսեանի հրատարակութեամբ, եւ շարունակուած է գտնել մինչեւ 1973 (ԽԱՉԱՏՐԵԱՆ, Հ., Հայկական օրացոյցների եւ տարեցոյցների մատենագիտութիւն, Ալ. Միսնիկեանի անուան համրային գրադարան, Երեւան 1976, 201):

83 Տ. Պօղոսեանին ուղղուած Զարեանի նամակին ճակատագիրը անյայտ է: Տե՛ս Պօղոսեանի պատասխանը, գրուած՝ Մայիս 31, 1949ին (ՄԱՏԹԷՈՍԵԱՆ, Վ., Կոստան Զարեանին յղուած զոյգ մը նամակներ իրանէմ, ի Բագիմ, Դեկտեմբեր 2005, էջ 50-51):

84 Կ'ակնարկէ Յակոբ Օշականին:

85 Ոստանիկ, *Multa paucis*, ի Նայիրի, Յունիս 1949, 345-346, որ կը կրէ «Բարեկամիս» կոստան Զարեանին» ձօնը:

ան էր դրել: Ձկարողացայ գնալ՝ մանկավարժական ժողովի պատ-
ճառով:

Շա՛տ երկարեց: Նոր տարւայ առթիւ իմ ու տիկնոջ լաւա-
գոյն մաղթանքներ՝ բոլորիդ:

Ջերմօրէն՝ ՈՍՏԱՆԻԿ

Թ.Գ.- Պրոֆէսորի⁸⁶ մասին նոյն կարծիքն էինք կազմել ես
եւ կինս էլ, ինչ որ դու յայտնեցիր: Այցելեց մեզ մի քանի ան-
գամ ու էլ չերեւաց: Երկու օր առաջ նոր տարւայ քարթ էր դր-
կել:

Փէհլէվիից ի՞նչ լուր: Կուզե՞ս որ այս ամառը գնամ նրան
տեսնելու եւ հանգամանօրէն խօսելու նրա հետ⁸⁷: Վախենում եմ
նրա շրջապատից: Կամ կալոկեն կամ պետութիւնը կսեփականաց-
նի եթէ նախօրօք չթողնի մի գրութիւն:

ՆՈՅՆ

Եթէ գիւղ է փախել եւս տուր նոր հասցէդ: Առողջութե-
անդ մասին շուտ գրիր:

Ժ.

Թեհրան 4 յունիս 1949

Սիրելի՛ Կոստան,

Եթէ հաշի նստես, ի՛մ հերթն էր գրելու, բայց ճամբոր-
դութիւնս, մէկ էլ զբաղումներս պատճառ դարձան, որ նամակս
ուշանայ ու Հոլանդայից ղրկածդ բացիկին⁸⁸ յաջորդի վերադար-
ձիդ այս կենսուրախ նամակը: Երեւում է, որ ճամբորդութիւնդ

86 Կ'ակնարկէ Վահան Գալեմտէրեանին, որ եղած է Նիւ Եորքի Գոլումպիա
համալսարանի դասախօս:

87 Կ'ակնարկէ Զարեանի խորք եղբօր՝ Բաբա Գասպարեանին:

88 Զարեան Հոլանտա այցելած է 1949ին:

իր բարերար դերը կատարել է, մինչդեռ դժկամութեամբ գնացիր: Մեծ գոհունակութիւն է պատճառել ինձ՝ թարմ, առոյգ ու զւարթ տրամադրութիւնը:

Մարգարէական մի տող կայ նամակումդ. ասում ես՝ ո՞վ գիտէ եթէ մէկ-մէկի տեսնենք... Ես հաւատ չունեմ, սակայն նման պարագային տասը տարով պիտի երիտասարդանայի, մանաւանդ՝ Հայաստանում: Գիտե՞ս, որ յուշերս հասցրել եմ Փարիզ արդէն, 2 rue Tournefort, ու կանգ առել այն գիշերւայ տեղատարափ անձրեւի տակ, երբ մենակ եկար ինձ ճանապարհելու դէպի Իտալիա: Ի՛նչ օրեր էին...⁸⁹

Այստեղից քեզ «Ալիք» է ուղարկւում արդէն. երեւի շուտով կը ստանաս: Նրա նոր երիտասարդ ու կորովի խմբագիրը՝ պաշտօնակիցս ու բարեկամս միաժամանակ⁹⁰, որ ընդհանրապէս հայ արժէքների եւ մասնաւորապէս քո հանդէպ առանձին գուրգուրանք է տածում, ինչ որ իրազեկ ես արդէն, յայտնել է ինձ իր ուրախութիւնը՝ աշխատակցութեանդ առթիւ եւ շուտով պիտի գրի նաեւ քեզ, եթէ արդէն չի գրել: Մինչ այդ, իմ կողմից, իմացիր, որ թէեւ վճարի քանակի խնդիրը հարցական ձեւով էիր դրել, այնուամենայնիւ անպատշաճ եմ նկատում, նման խնդրում սակարկելը, իսկ լիովին բաւարարելը՝ միջոցները չեն թոյլատրում: Այս կացութիւնը փրկելու համար որոշեցի դիմել բարեկամութեանս, ի վնաս քեզ, առաջարկելով, որ իւրաքանչիւր յօդուածդ վեց դօլար հաշւես: Ես անմիջականից աւելի նկատի ունեմ հետագան: Թերեւս ուզենաս մի օր այս կողմերս էլ անցնել: Սրանից անկախ, կայ եւ քեզ այստեղ հրաւիրելու խնդիրը: Կողմնակի կերպով խնդրւած է ինձ այդ ուղղութեամբ տրամադրութիւնդ շօշափել: Ամեն պարագային գրիր ինձ:

Սիրով՝ ՈՍՏԱՆԻԿ

Օլիկը բարեւում է քեզ, բոլորիդ:

89 Ոստանիկի յուշերը անտիպ մնացած են:

90 Կ'ակնարկէ Տաճատ Պօղոսեանին:

ԺԱ.

8 սեպտեմբեր 1949 թ.
Թեհրան

Սիրելի՛ Կոստան,

Նամակդ եւ հեռագիրդ միաժամանակ հասան ինձ, բայց չատ ուշ: Ուշացումը կատարւել էր Թեհրանից՝ հաղորդակցութեան չգոյութեան պատճառով: Ես գտնուում էի Դէմէվէնդի փէշե-րից կախած հեռաւոր մի գիւղում, ուր իջնում են ջորիներով: Այնուամենայնիւ շտապեցի՝ հակառակ կնոջս հիւանդ վիճակին, ջորիներ գտայ ու ճանապարհւեցի դէպի Թեհրան: Այնտեղ ինձ յանձնեցին մի ուրիշ հեռագիր Փէհլէվիից ստացւած Եգանեան ստորագրութեամբ: Իսկոյն պատասխանեցի «Գալիս եմ, լուր Բաբայի առողջութիւնից»: Իսկոյն պէտք եղած ճանապարհածախս ու տոմսակ ապահովեցի յաջորդ օրւայ օթօբիւսներով մեկնելու համար (12 ժամւայ ճանապարհ է): Առաւօտեան՝ մեկնելուց առաջ ստացայ՝ նոյն Եգանեանից հետեւեալ հեռագիրը. «Գալդ ի գուր է, արդէն ուշ է»⁹¹: Չանազան փնտռուքներից յետոյ իմացայ, որ այդ Եգանեանը Բաբայի քրոջ տղան է եւ քեզ ու ինձ հեռագրողը:

Աշխատում եմ կողմնակի կերպով իմանալ թէ ինչ է կատարւել եւ թէ շօշափելի ինչ է թողել եւ ինչ կարելի է անել: Ամեն պարագային քո գալը խոհեմութիւն չէ նոյնիսկ Թեհրան՝ ներկայ պայմաններում. իմ գնալս էլ աւելորդ՝ մանաւանդ որ պաշտօնս կորցնելուց բացի դրական մի շահ չպիտի կարողանամ ապահովել քեզ համար, քանի որ մէջտեղը ոչինչ չկայ կամ եթէ կայ էլ յայտնի չէ տակաւին:

Ամեն դէպքում գրելու եմ քեզ մանրամասն. եթէ քեզ մի բան յայտնի է գրի՛ր ինձ:

Ես լաւ եմ: Տասնեակ տարիներից յետոյ առաջին անգամ լինելով կարողացայ երկու ամիս հանգստանալ, բայց դժբախտաբար կիսա հիւանդացաւ ու դեռ հիւանդ պառկած է: Ահա բարեւում է քեզ յայտնելով միաժամանակ իր ցաւակցութիւնը:

91 Այս նամակը կը սրբագրէ այն տեղեկութիւնը, թէ Ջարեանի խորթ եղբայրներէն մէկը (որուն անունը տուած չէ) մահացած էր Իրանի մէջ 1955ին, 117 տարեկանին (ԹՈՐԱՆԵԱՆ, Թ., Կոստան Ջարեան (Կեանքը եւ գործը), ի Նայիրի, 1 Մարտ 1970, 4):

Յոյս ունեմ, որ լաւ ես. աւելի շուտ լաւ էք բոլորդ: Այսօր ինձ ցոյց տւին նկարդ եւ տեսարաններ գիւղիցդ ու աշխատանոցիցդ: Ուրախացայ որ լաւ պայմաններում ես եւ կարողանում ես աշխատել:

Ջերմ բարեւներով՝

ՈՍՏԱՆԻԿ

ԺԲ.

15 Յունւար 1950 թ.
Թեհրան

Սիրելի Կոստան,

Սպասում էի Բաբայի խնդրի լուծման, որպէսզի ըստ այնմ գրէի քեզ: Սակայն ինչպէս տեսնում եմ, կարող է դեռ երկար տեւել եւ յաջող ելքի մասին էլ կասկածում եմ: Եթէ Վահէն⁹² խորհուրդիս հակառակ շարժած լինէր եւ պահանջողի դիրք բռնած, ձեռք բերւած 30000 ռիալն ու ժամացոյցն էլ չէր ստացւի: Այժմ գործը յանձնել ենք մեր դպրոցի նախկին աշակերտ, տեղիս համալսարան աւարտած, պարսկերէն թերթի խմբագիր եւ լայն կապեր ունեցող մի երիտասարդ իրաւաբանին (Դեւի մօրաքրոջ տղան)[,] որ միաժամանակ «Ալիք»ի լաւագոյն աշխատակիցն է եղել⁹³: Տեսնենք թէ նա ինչ կարող է անել:

Վահէի մասին ինձ ոչինչ չգրեցիր. ո՛չ գալուց առաջ եւ ոչ էլ յետոյ: Ամէն պարագային անհոգ եւ միամիտ եղիր. թէեւ իջել է իր հարուստ քենակալի մօտ, սակայն համարւում է մեր տան հարազատ անդամը՝ ազատ, ինչպէս իր տանը: Հաւանաբար ինքն արդէն քեզ գրած է: Հարկ եղաւ, որ մի քանի դասեր յանձնարարեմ նրան, գերմաներէն, իտալերէն եւ ֆրանսերէն (իմ բարե-

92 Կ'ակնարկէ Վահէ Զարեանին:

93 Կ'ակնարկէ իրաւաբան Ալբերտ Բեռնարդիին (1926-2010), որ Թեհրանի համալսարանը աւարտած է 1946ին: Այնուհետեւ անդամ եղած է պարսկական *Իրան է մա քեթի* խմբագրական կազմին եւ գլխաւոր աշխատակից՝ *Դարիա* պարբերաբերթի: Տե՛ս ՄԱՀԱԿԵԱՆ, Օ., *Իրաւաբան դոկտ. Ալբերտ Բեռնարդիի մահուան 40-օրեակի առթիւ. յուշերը եւ յոյգեր, Կանթեղ օրացոյց, Թեհրան 2010*:

կամների շրջանակում): Այդպիսով նա կարող է առանց նեղելու եւ ճնշելու իր մանր ծախսերը հոգալ. այլ խօսքով մի ուսուցչի ռոճիկ միայն: Պարապ մնալուց նախընտրելի է: Թէ ի՞նչ պիտի լինի իր հետապնդած հիմնական գործը, այդ մասին ես չատ բան չեմ հասկանում եւ իմ ու շրջապատիս կարելիութեան սահմանից դուրս է: Գիտեմ միայն, որ եթէ իր քենակալը [sic] Հայկ Վարժապետեան այս կամ այն կերպ, թէկուզ յաճմարարութեամբ չօժանդակի Վահէին[,] դժւար թէ վերջինս ունէ՛լ յաջողութիւն գտնի շուկայում կամ տեղիս առեւտրական ասպարէզում, մանաւանդ, որ Վահէի նպատակը ռոճիկով պաշտօնավարելը չէ: Ամէն պարագային կամքի տէր տղայ է, յամառ ու յարատեւ հետապնդող. տեսնենք պիտի կարողանա՞յ արմատ ձգել այս առիւծների մէջ... կասկածում եմ:

Գրքեր էիր ուզել Վահէի միջոցով: Սակայն անունների մատնանշման մէջ սխալուել էիր: Ինչ որ կարելի [է] քեզ ղրկել այս է.-

1) «Խամսայի Մելիքութիւններ, Ղարաբաղի Աստղագէտը եւ Գաղտնիք Ղարաբաղի» երեքն էլ ամփոփած մէկ հատորում⁹⁴.- արժէքը 30 թուման:

2) «Դաւիթ Բէկ» (գրաբառ) [sic] Ստեփանոս վարդապետ Շահումեանի⁹⁵ լոյս տեսած 1880-ին⁹⁶. արժէ 20 թուման:

3) Աբրահամ Կաթ[ողիկոս] Թէքիրդաղցու⁹⁷ օրագրութիւնը Նադիր շահի⁹⁸ ժամանակակից դէպքերի եւ անցքերի մասին (1796[-ին] Կալկաթայում լոյս տեսած արժէ 30 թուման)⁹⁹:

94 Խօսքը կը վերաբերի Բաֆֆիի այս երեք գործերուն հետեւեալ հրատարակութեան՝ ՐԱՖՖԻ, Խամսայի մելիքութիւնները. Ղարաբաղի աստղագէտը, Գաղտնիքն Ղարաբաղի, երրորդ տպագրութիւն, Միֆթարեան տպարան, Վիեննա 1906:

95 Ստեփանոս Շահումեան (1702-1782)՝ Սիւնիքի իշխան, Դաւիթ Բէկի գործակից, որուն պատումին վրայ հիմնուելով, Հ. Ղուկաս Սեբաստացի շարադրած է «Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին»ը:

96 Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին, եւ պատերազմաց Հայոցն իսպանու (հրտ. Արգար Գուլամիրեանց), տպ. Սուրբ Կաթողիկէ էջմիածին, Վաղարշապատ 1871:

97 Աւելի ծանօթ՝ Արրահամ Կրետացի ամուռով, Ամենայն Հայոց Կաթողիկոս (1734-1737):

98 Նատիր (1688/1698-1747)՝ Պարսկաստանի շահ 1736-1747 թուականներուն:

4) Աշոտ Յովհաննիսեանի¹⁰⁰ «Հայ ռուս օրիննապիայի ծագման խնդիրը» արժէ 30 թուաման.– վերջինս լոյս է տեսել 1921-ին Երեւանում¹⁰¹;

Կարծում եմ սակայն ինչ որ քեզ պէտք է, դա դարձեալ Աշոտ Յովհաննիսեանի գերմաներէն գործն է Խարայէլ Օրու¹⁰² մասին. դա կարող ես դիմել Գերմանիա, Արտաշէս Աբեղեանին[.]¹⁰³ նա կարող է մի օրինակ գտնել եւ ղրկել քեզ.– կոչւում է A. Johannissian, “Israel Ori und die Armenische Befreiungsidee”, München 1914¹⁰⁴: Նոյն հեղինակի մի յօդածը՝ «Արարատ» ամսագրի մէջ, լոյս տեսած 1915-ին, էջ՝ 775. «Յակոբ Ջուղայեցու մի գրութիւնը ռուս արքունիքին» վերնագրով¹⁰⁵:

Կայ եւ մի նոր ու ընդարձակ ուսումնասիրութիւն՝ Յակոբ Տէր Յակոբեանից¹⁰⁶, որ լոյս չի տեսել դեռ¹⁰⁷: Հեղինակը

99 Պատմութիւն անցից տեառն Արրահամու սրբազան կաթողիկոսին հայոց Թափրտաղցոյ, առ Նադրշահ արքային պարսից, Կալկաթա 1796 (վերահրատարակութիւն՝ ԱՐՐԱՀԱՄ ԿՐԵՏԱՑԻ, Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նադր-շահին Պարսից, տպ. Սուրբ Կաթուղիկէ Էջմիածին, Վարդապատ 1870):

100 Աշոտ Յովհաննիսեան (1887-1972)՝ խորհրդահայ պատմաբան եւ քաղաքական գործիչ:

101 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Ա., Հայ-ռուս օրիննապիայի ծագման խնդիրը. պատմական-քննադատական ուսումնասիրութիւն, ի Էջմիածին 1921: (Խմւտ. Նոյն, Պատմագիտական ուսումնասիրութիւններ, ի Էջմիածին 2007, 89-188):

102 Խարայէլ Օրի (1658-1711)՝ հայ ազատագրական շարժման գործիչ:

103 Արտաշէս Աբեղեան (1878-1955)՝ արեւելահայ բանասէր եւ քաղաքական գործիչ: Ռուսմը ստացած է Գերմանիա, ուր ապրած է 1922էն ետք:

104 JOHANNISIAN, A., *Israel Ori und die Armenische Befreiungsidee*, M. Müller und Sohn, München 1913: Ա. Յովհաննիսեանի դոկտորական ատենախօսութիւնն է, պաշտպանուած՝ Միւնիխի համալսարանին մէջ:

105 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Ա., Յակոբ Ջուղայեցու մի գրութիւնը ռուս արքունիքին, ի Արարատ, 9-10, 1915, 775-781 (Խմւտ. Նոյն, Պատմագիտական ուսումնասիրութիւններ, 53-60):

106 Յակոբ Տէր Յակոբեան (Յ. Իրազեկ, 1881-1953)՝ բանասէր, քաղաքական եւ կրթական գործիչ:

107 Հաւանաբար կ'ակնարկէ «Հայ ազատագրական շարժումը, 1548-1882» անտիպ ուսումնասիրութեան, որուն մէկ գլուխը, կրճատումներով, լոյս տեսած է յետմահու (ԻՐԱԶԵԿ, Յ., Ստեփաննոս Սալմաստեցի. հայ ազա-

գտնուում է Բաղդադ, այնտեղի դպրոցի տեսուչն է¹⁰⁸ . եթէ ուզես, չի մերժի քեզ հարկ եղած լուսաբանութիւնները:

«Նաւը լերան վրայ» ստացայ շնորհակալութեամբ: Յան-ցաւորը Վահէն է (ինչպէս խոստովանեց), որ այդ նեղութիւնը քեզ պատճառել է: Կաշխատեմ փոխարինել:

Ես լաւ չեմ: Վերջերս տառապում եմ անքնութեամբ՝ գիշեր եւ ցերեկ. միւս կողմից ստամոքս ու աղիքներս են ինձ նեղում. առանց դեղահատի դժւար է անքնում օրս: Սոսկալի նիհարել եմ: Այժմ սրսկումներ են կատարում, տեսնենք, ինչ պիտի լինի դրա արդիւնքը:

Ընդունիր իմ կնոջս ու Վահէի էլ ջերմ բարեւները:

Քո՝ ՈՍՏԱՆԻԿ

ԺԳ.

4 մարտ 1950
Թեհրան

Սիրելի Կոստան,

Սպասում էի նամակիդ, որ կուշանար: Դա ինձ մտահոգութիւն էր պատճառում: Զէի բաւականանում Վահէի տւած չոր ու ցամաք տեղեկութիւններով եւ հաղորդած բարեւներով միայն: Վերջապէս ստացայ նամակդ եւ ուրախ եմ առողջութեանդ ու եռանդիդ համար: Վստահ եմ, որ նոր գործդ, իր բոլոր կողմերով, յետ չի մնար ցարդ տւածներից¹⁰⁹, որքան էլ վերջինիս համար

տագրական շարժման ռաիփիրան, Բաքի տարեգիրք, Ա. հատոր, Թեհրան 1969, էջ 215-227): Աշխատութիւնը կը գտնուի Պէյրութի Համագալիմի մատենադարանին մէջ (ԻՐԱԶԵԿ, Յ., Պատմութիւն հնդկահայ տպագրութեան, հրտ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս 1986, ԻԳ):

108 Յակոբ Տէր Յակոբեան Պաղտատի ազգային դպրոցներու տեսուչ եղած է 1946-1950ին:

109 1950ին Զարեան ծրագրած էր Իսրայէլ Օրիի մասին պատմական վէպ մը գրել: Այդ նպատակով դիմած էր տարբեր անձներու (Սիմոն Վրացեան,

աղբիւրներ չունենաւ ձեռքիդ տակ: Օրին արդէն քիչ աղբիւրներ ունի եւ եղածներն էլ լաւ չուսումնասիրւած ու մշուշապատ են՝ որքան գիտեմ: Դժբախտաբար գաղութներում պատմական, քաղաքական եւ այլն անհրաժեշտ գրքերն էլ չեն գտնուում հրապարակի վրայ, գրախանութներում: Գրադարաններն անգամ չառ աղքատ են այդ տեսակէտից: Քեզ մնում է դիմել Վենետիկ եւ կամ աւելի շուտ, ապաւինել քո սեփական, ընդարձակ ու ճոխ մատենադարանին, որ գլուխդ է, իր աղամանդափայլ յիշողութեամբ: Այս բոլորով հանդերձ ղրկում եմ քեզ ձեռքիս տակ գտնւած մի փոքր գրքոյկի՝ «Խորայել Օրի»¹¹⁰, որ կարող է թերեւս կրակդ արծարծել միայն:

Վահէն լաւ է: Աներոջս տղայի միջնորդութեամբ տեղաւորել է գերմանական մի հիմնարկութեան մէջ, շարունակելով նաեւ իր մասնաւոր դասերը, թէեւ վերջիններին համար շատ քիչ ժամանակ է մնում նրան: Եթէ արտակարգ դէպքեր եւ արգելքներ չպատահեն, յոյս կայ, որ այդ հիմնարկութեան գլխաւոր ներկայացուցիչն ու վարիչը նշանակւի՝ Թաւրիզում: Այդ առթիւ եւ ընդհանրապէս, մտածում է լուրջ կերպով պարսկերէն եւ անգլիերէն սովորել, ուժեղացնելով միաժամանակ իր գերմաներէնը՝ ու Ֆրանսերէնը, լաւագոյնս յաջողութիւն ունենալու համար: Ինչ վերաբերում է Բաբայի դրամին, չեմ կարծում, որ նոր մի բան էլ ստացւի այլեւս:

Տեղիս վերաբերմամբ յայտնած կարծիքդ ճիշտ է միայն ինձ նման մէկի համար, որ պիտի ապաւինի հայկական սահմանափակ շրջանին ու աղքատիկ դպրոցին, այլապէս՝ կարելիութիւնների մի ընդարձակ միջավայր է նրանց համար, որոնք տեղական եւ օտար լեզուների հետ միաժամանակ գործին համապատասխան ծանօթութիւն եւ ընթացիկ մասնագիտութիւն ու-

Բեգլար Նաւասարդեան, Ոստանիկ)՝ աղբիւրներ հայքայթելու մպատակով: Ի վերջոյ, գաղափարէմ հրաժարած է:

110 Թերեւս կ'ակնարկէ Աստրախանի մէջ 1912ին Թումաս գրչանունով լոյս տեսած «Խորայել Օրի» 41 էջնոց գրքոյկին: Ըստ Բախտիար Յովակիմեանի ծածկանուններու քառարանին, Թումաս անունը մէկ ատիթով գործածած է Ղազարոս Աղայեանը 1887ին (ՅՈՎԱԿԻՄԵԱՆ, Բ., Հայոց ծածկանունների քառարան, Երևան 2005, 174): Արդեօք Ղ. Աղայեան (1840-1911) գրադա՞ծ է այս միւթով ու գրքոյկը յետմահու հրատարակութիւն մըն է. կը մնայ հետազոտութեան միւթ:

նեն: Ժամանակին քեզ գրել եմ այդ մասին, Արմենի խնդրով¹¹¹. նոյնը պիտի գրէի եւ թելադրէի Վահէի համար, եթէ անակնկալ կերպով չգար:

Նամակդ ստանալուց առաջ, մի մեծ անակնկալ էր կատարել ինձ Նւարդը, որ ինձ չա՛տ, անչափ ուրախութիւն պատճառեց: Դեւի միջոցով¹¹² ղրկել էր իր նկարն ու մի արձանիկ. ինչքա՛ն հրճեցի: Արդէն ինձ ուրախութիւն պատճառող լաւագոյն բանը՝ անկեղծ բարեկամներիս յաջողութիւնն է, ամէ՛ն տեսակէտով ե՛ւ առողջութիւնը, ինչ որ ցանկանում եմ ի սրտէ՛ բոլորիդ:

Ես լաւ եմ հիմա. անքնութեան շրջանս անցաւ, բայց ստամոքսիս վիճակը նոյնն է դեռ: Ընդհատել եմ անձնական, մտաւոր աշխատանքներս մինչեւ տեսնենք ինչ արդիւնք կստացւի:

«Մտածումներ»դ տպւեց¹¹³: Դա ուշացաւ Տաճատի լաւ դիտաւորութեան պատճառով¹¹⁴: Կամեցել էր հետս տեսնւել ու խորհրդակցել՝ պատշաճ մի յառաջաբան, կենսագրական տեղեկութիւն ու մի նոր նկար դնելու համար նիւթի հետ: Իսկ այդ տեսակցութեան արգելք էին հանդիսանում ե՛ւ իմ դպրոցական ժամերը ե՛ւ նրա արտակարգ եւ անյետաձգելի, անակնկալ կերպով առաջ եկած ժամանակաւոր գործերը, որոնք վերջացան նամակդ ինձ հասնելուց 4-5 օր առաջ միայն: Նոր նկար չունէիք, ոչ էլ պէտք եղած կենսագրական տեղեկութիւններ. յառաջաբանի էլ կարիք չզգացուեց եւ բաւականացանք այդ կարճ ծանուցումով ու յաջորդ թւով քու մասին եղած Վ. Համբարձումեանի գրախօսականով, ինչպէս պիտի տեսնես¹¹⁵:

Շարունակիր աւելի ընդարձակ յօդաձևերով աշխատակցել «Ալիք»ին, որպէսզի շօշափելի մի բան գոյանայ եւ տրւի Վահէ-

111 Կ'ակնարկէ Արմէն Զարեանին:

112 Դեւ 1949ին Իտալիա այցելած էր:

113 ԶԱՐԵԱՆ, Կ., *Մտածումներ*, ի Ալիք, 26 Փետրուար 1950 (Նոյն, Դէպի Արարատ, Երևան 2001, 295-297):

114 Տաճատ Պօղոսեան Ալիքի խմբագիր եղած է 1949-1956ին: Նախօրօք, 1936ին մաս կազմած էր խմբագրութեան (ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ, *Պատմութիւն*, էջ 110):

115 ՀԱՄԲԱՐԶՈՒՄԵԱՆ, Վ., «Փիլիսոփայ գրագէտը. Կոստան Զարեան, ի Ալիք, 27-28 Փետրուար եւ 1-2 Մարտ 1950:

ին¹¹⁶: Ինչպէս արդէն գրել էի քեզ նախապէս, Տաճատն իր կարելին չի՛ խնայի, հնարաւորութեան սահմաններում վարձահատոյց լինել: Կարելի է ասել միակ անձն է Թեհրանում, որ անշահախնդիր կերպով գրական մշակներին ըստ արժանւոյն գնահատել գիտէ եւ աշխատում է ա՛յդ ուղղութեամբ մասնաւոր եռանդով:

Դէ՛, ողջ լեր եւ Տէրն եղիցի ընդ քեզ,- ինչպէս ասում են, եւ ընդ Իսրայէլ Օրիիդ, ամէն, ընդունելով նաեւ տիկնոջս՝ Օլիկի ջերմ բարեւները:

ՈՍՏԱՆԻԿ

ԺԴ.

Թեհրան 8 յուլիս¹¹⁷ 1950 թ.

Սիրելի՛ Կոստան,

Ուշացաւ նամակս այս անգամ, որովհետեւ շատ զբաղւած էի եւ միեւնոյն ժամանակ մտահոգւած՝ Վահէի անորոշ վիճակով: Աշխատեցի համոզել նրան, որ վերադառնայ քանի որ իր դիտաւորութիւնները բախում են որոշ դժարութիւնների, իսկ ապագա[յ] հեռանկարներով օրօրելի՝ կնոջից հեռու, առանց շօշափելի եկամտի, կարող է վնասակար հետեւանքներ ունենալ եւ տեղի տալ անախորժութեանց, մանաւանդ որ այստեղից աննպաստ լուրեր էին հաղորդւել ժենիին¹¹⁸:

Այսպէս թէ այնպէս մնում է դեռ եւ այժմ աշխատում է մի այլ հիմնարկութեան մէջ, ուր դարձեալ իր նախասիրած արտածման եւ ներածման գործեր են կատարւում: Վարձատրութիւնը (300 թուման) անհամեմատ նախկինից լաւ է, բայց չնչին՝ մի ընտանիք ապրեցնելու համար, եթէ իր ակնկալած տոկոսային շահը ձեռք բերելը չկարողանայ: Եւ թէ որքան պիտի արդարանան ապագայ գործի հետ կապւած յոյսերը, դա էլ կը պարզւի մէկ-երկու ամսից:

Վահէն վատ չի՛ ապրել այստեղ եւ կարող էր շատ աւելի տանելի կեանք ստեղծել եւ ապագայում էլ թերեւս մեծ յաջողութիւն ունենալ, եթէ երկու հիմնական արգելքներ չհարկադ-

116 Որքան մեզի յայտնի է, Զարեան այլեւ չէ աշխատակցած Ալիքին:

117 Նամակիմ վրայ գրուած է «Յունիս» եւ ուղղուած:

118 Վահէ Զարեանի կինը:

րեն նրան վերադառնալու. — Առաջինը՝ ընտանիքի մօտ գտնվելու անհրաժեշտ պարագան է, իսկ երկրորդը՝ իրենից անկախ իր խառնվածքը:

Գրում եմ. «Օրիի մասին ստացած գրքոյկդ ստացայ»: Ես ոչ ոքից գրքոյկ չեմ ստացել, այլ ղրկել եմ քեզ իմ գնած գրքերից: Մտադիր եմ նաեւ որեւէ ձեռով ձեռք բերել Լէօի¹¹⁹ պատմութեան վերջին հատորը, ուր սպառիչ տեղեկութիւններ կ'ընենաս Օրիի մասին¹²⁰:

Ուրախ եմ որ բանաստեղծութիւններդ «պիտի հրատարակւեն»¹²¹[:] Բոլոր յաջողութիւններդ ես այնպէս եմ դիմաւորում, ինչպէս որ իմս լինէին:

Միշտ սիրով

ՈՍՏԱՆԻԿ

Յ.Գ. Այդ 3000 թումանի մասին ոչինչ չեմ գրում. իսկ ես Վահէի հետ նման խնդիրների շուրջ չեմ խօսում եւ ընդհանրապէս հասկացնել եմ տւել նրան, որ ես այստեղ փոխարինում եմ քեզ, հետեւապէս ինք հաշւի պիտի առնի այդ եւ ըստ այնմ շարժւի: Կինս բարեւում է քեզ:

ՆՈՅՆ

Յունիսին գրած այս նամակը շարունակ մնաց սեղանիս վրայ եւ այսօր՝ օգոստոսին հազիւ կարողացայ թղթատարին յանձնել: Վահէն գրած կլինի քեզ, որ ատամնացաւ ունէի եւ բարդութիւն էր առաջացել:

Ի՞նչ ես մտածում. մինչեւ ե՞րբ պիտի մնաս այդ կղզում¹²². ինչո՞ւ չեմ ուզում անցնել Եգիպտոս, ուր ամէն տեսակէտով նախընտրելի է:

Գրիր:

ՆՈՅՆ

119 Լէօ (Առաքել Բաբախանեան, 1860-1932)՝ արեւելահայ պատմաբան ու գրականագետ:

120 Լէօ, Հայոց Պատմութիւն, հտ. 3, Հայպետհրատ, Երեւան 1946:

121 1950-1951իմ Վահան եւ Բէգլար Նաւասարդեանները ծրագրած էին Զարեանի քերթութեան հատորի մը հրատարակութիւնը՝ Գաեիրեի մէջ: Ծրագիրը անհետեւամբ մնաց:

122 Կակնարկէ Իսկիայիմ:

ԺԵ.

28 ապրիլ 1951 թ.
Թեհրան

Սիրելի Կոստան,

Նամակդ ստացայ: Ուրախ եմ, որ կարողացել ես Հռոմ գնալ, որովհետեւ Վահէն ի վիճակի չէր քեզ մօտ գալ, մանաւանդ՝ կ[ը]ռւշանար: Արդէն չա՛տ էր ուշացել:

Երանի՛ թէ կարողացած լինէի նրան օգտակար լինել այնպէս, որ իրօք շնորհակալութեան արժանի մի բան համարէր: Մնացեալը մի սրտբաց վերաբերմունք է եղել միայն, որով նա իրեն ազատ է զգացել՝ մեզ մօտ ինչպէս իր սեփական տանը եւ ուրիշ ոչինչ: Դժբախտաբար նրա մեկնումը զուգադիպեց իմ ու կնոջս հիւանդութեանը, տան տեղափոխութեան եւ մանաւանդ տնտեսական աննպաստ կացութեանը: Այնպէս որ ներողամիտ եղիւր, որ թաց աչքով կարօտի մի ջերմ համբոյրից բացի, այլ բան չկարողացայ փոխանցել տալ քեզ:

Ահա թէ ինչո՞ւ, տողերդ, որ անկեղծ են, ինչպէս նաեւ նոր ստացած Վահէի երկտողը՝ Ֆրանսերէնով, այլ եւ Նւարդի ու մօրը՝ տ[իկին] Թագուհու ջերմ ու սրտագին արտայայտութիւնները, խռովել ու յուզել են ինձ այժմ:

Գրական գործերս մի բան չեն եւ չարժեն: Եղածն էլ մնում է ձեռագիր վիճակում եւ երբ եւ է հրատարակւած տեսնելու հեռանկարն անգամ չունենալ: Տեղական ամսագրերին չեմ աշխատակցում. տեսնում ես արդէն նրանց խեղճութիւնը, իսկ «Ալիք» օրաթերթին, որ ստանում եմ, պարտաւոր եմ այս կամ այն առթիւ մի բան գրել, ինչպէս վերջերս, տ[իկին] Թագուհու խնդրանքով՝ Զադէյեանի¹²³ մասին¹²⁴: Չէի խորացել. տեղը չէր.

123 Կակնարկէ երգիչ Ստեփան Զատեանիմ՝ Լիմցի (Աւստրիա) օփերայի մեներգիչ եւ նոյն քաղաքի երաժշտանոցի դասախօս: Ուսումը ստացած է Վիեննայի երաժշտանոցիմ մէջ, ուր իր աւարտաճառը գրած է «Հայ ժողովրդական երգերը» միւթով: Վիեննայի Հայ Երիտասարդաց Մշակութային Դաշնակցութեան հիմնադիրը եղած է 1931ին (միութիւնը շարունակուած է մինչեւ 1940): Զատեան Վահէ Զարեանի աներձագն էր, որդիմ՝ գործարար Երուանդ Զատեանի, որ 1913ին Վիեննայի Ս. Փրկիչ հայ առաքելական մատրան հիմնադիրներէմ մէկը եղած է (Գեորգեան ԿԱՐՕ, Աւստրիոյ հայեր, Ամեմուն տարեգիրքը, Պէյրուք 1966, 353. ԶԱ-

հարցը միայն շօշափել էի ու անցել: Անուշուր տեղ էի այդ-
տեղ...¹²⁵

Այսքան, այս անգամ: Յոյս ունեմ, որ լա՛ւ ես եւ կարողա-
նում ես աշխատել, միակ միսիթարական բանը, թերեւս:

Ընդունիր տիկնոջս եւ իմ ջերմ բարեկները:

ՈՍՏԱՆԻԿ

Յ.Գ. Ինչ վերաբերում է Վահէի մոռացած կապոցին, դա
տեղական, սովորական, երկու հասարակ, մուխ տւած ձուկ էր՝
դասալիչ անուշով, որից մէկը փչացած արդէն: Այստեղ առատ է
եւ միջակ դասակարգի ամէնօրեայ ուտելիքը՝ փլաւով:

ԲԵԱՆ Ռ., *Ռուզան. Եւրոպայում ծնուած եւ ապրող մի հայուհու փոր-
ձառութիւն*, Արեգ հրատարակչութիւն, Երեւան 2010, 5): Յունուար 24,
1930ին, Վիեննայի նորանշանակ հոգեւոր հովիւ Տ. Ղեւոնդ քհն. Իւթի-
նեանը Ե. Ջատեանի մասին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե-ին
գրած է. «Կ'արժէ գնահատել տեղւոյս վարչութեան եւ ի մասնաւոր ա-
նոր խիստ ազնիւ ու ազգասէր նախագահին եւս գործունէութիւնը: Տաս-
նութ տարիներէ ի վեր ջանք չէ խնայած այս գաղութին Ս. Մատուռը
բաց պահելու ու հայ կեանքը հոս վառ պահելու: Քաջալերական պիտի
ըլլար օրինութեան կոնդակաւ մը պատուել զինքն ու ընկերները: // Տեղ-
ւոյս վարչութեան տիտղոսն է Վիեննայի հայ եկեղեցական համայնք եւ
նախագահին անուան է Տիար Երուանդ Ջատեան, հոս կը զբաղի գորգի
առեւտուրով աւելի քան երեսուն տարի ու այս տեղի վաճառականական
քամառուոյի նախագահն է. իր հասցէն II Wien, Praterstr. N 9: Ամուսնացած
է եւ ունի ազնիւ մի կին ու վեց զաւակներ» (ԲԵՀԲՈՒՐԴԵԱՆ, Ս. (կազ-
մող), *Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան*, գիրք ԺԳ. Գեորգ Ե.
Սուրբնեանց Կաթողիկոս Ամենայն Հայոց (1847-1930), «Մուղնի» հրա-
տարակչութիւն, Երեւան 2005, էջ 655):

124 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Ռ., *Ստեփան Ջադէեան. համբաւաւոր հայ արուես-
տագէտ*, ի Հայաստանի Կոչմակ, 1 Ապրիլ 1951:

125 «Խնդիրը խորհրդածութեան դուռ է բաց անում եւ կարող է մեզ հե-
ռուները տանել, այլապէս անհրաժեշտ էր ու շահեկան մամուլի միւթ-
դարձնելով՝ դնել կշեռքի երկու մօտրների մէջ՝ նրանց, որոնք *նախընտ-
րեցին հայկական ամփառ*, այլ եւ *անշնորհակալ միջավայր*ը. ուսման իսկ
լքելով օտար փառքն ու համբաւը (Կ. Ջարեան, Շահմուրադեան), եւ
նրա՛նց, որոնք քարճարացան օտար միջավայրում, ուսման իսկ լքելով հայ-
կականը (Ջ. Սիւրմէեան եւ ուրիշներ)» (*անդ*, ընդգծումը բնագրային է):

Այժմ անհնար է ուղարկել. մինչեւ տեղ հասնելը պիտի հոտի. բացի այդ, իր արժէքի քառապատիկ ծախս է պահանջում: Նմուշի համար ձմեռը կուղարկեմ, որ դրա համն էլ տեսնես, թէ-եւ, գիտեմ պիտ[ի] հիասթափւես:

ՆՈՅՆ

Երբ Նւարդին նամակ գրես, մինչեւ ես կարողանամ նրան պատասխան տալ, յայտնիր, որ նորից նրան ուղարկւած է 3000 թուման որպէս յաւելեալ աշխատավարձ: Արձանը¹²⁶ դեռ չի տեղադրւած դամբարանում, որովհետեւ արքան¹²⁷ պիտի տեսնի նախ, իսկ նա հիւանդ է դեռ, եւ քաղաքական արտաքին եւ ներքին պայմաններն էլ պատճառ են ուշացման: Իսկ իր նէշը՝ մերկ աղջկայ արձանիկը, Տէրեանը ստացել է¹²⁸:

ՆՈՅՆ

126 Նուարդ Զարեան 1951ին քանդակած է Ռեզա շահ Փահլեւիի արձանը:

127 Մուհամմէտ Ռեզա Փահլեւի (1919-1980, գահակալած՝ 1941-1979)՝ Իրանի վերջին շահը:

128 Կ'ակնարկէ դեր գորավար Արամ Տէրեանին, որ 1950ին «Սփանի» դրամատան առաջին փոխտնօրէնն էր եւ, ըստ լրագրական տեղեկութեան, «Իրանի Վեհապետին ծննդեան տարեդարձին Համայուն երրորդ կարգի բարձր շքանշանին արժանացած է» (Հայ ազգային կեանք, Ի Հայաստանի կոչման, 1 Ապրիլ 1950, 308):

Summary

VOSTANIK'S LETTERS TO KOSTAN ZARIAN

VARTAN MATIOSSIAN

The author publishes fifteen letters addressed by Iranian-Armenian poet Vostanik (Vostanik Hovhannisian, 1896-1954) to one of the foremost names of Armenian literature in the twentieth century, Kostan Zarian (1885-1969). Zarian never set foot in Iran, but had contacts with Armenian writers living there, of which these letters from Vostanik, written between 1927 and 1950, give the most extensive testimony available so far. The originals are deposited in Zarian's file at the Museum of Literature and Art "Yeghishe Charents" (Yerevan).

Vostanik had a wandering life. Born in Van (Western Armenia), he lost his father very early. After receiving his elementary education in various schools of his birthplace, in 1913 he moved to the Caucasus, where he studied at the Gevorgian Lyceum of Saint Echmiadzin. He left unfinished his studies to enroll in the voluntary movement of 1915 and afterwards, during the first Republic of Armenia, worked in various newspapers as journalist and editor. After the fall of the Republic, he went to Tabriz and from there to Paris, where he mostly lived until 1934 (he also lived for a while in Bruxelles and, it seems, in Italy). He was member of the short-lived, but nevertheless famous "Menk" (We) literary group. In 1934, he moved to Tehran, where he worked as a teacher until his death. He was the author of several works of poetry and of a book of memoirs, which was left unpublished.

It appears that both writers knew each other since 1924-1925, at the time when Zarian was living in Paris. Afterwards, he moved to Venice, and probably met Vostanik occasionally during his visits to the French capital. Their correspondence restarted in 1946, when Zarian was in the United States. He returned to Europe in 1947 and settled in the Italian island of Ischia until 1951.

The letters are particularly interesting in their details about Vostanik's life and activities, as well as, by reflection, in details about Zarian's life. They also give a glimpse of French cultural life in the late 1920s and Iranian cultural life in the late 1940s. The publication has been enriched with extensive footnotes.